


7377

3km2
12-45



24 JUL 2013

1377

23 SEP 2006

3R02

Р-405

ՊՐՈԼԵՏԱՐՆԵՐ ԲՈԼՈՐ ՁԵՐԿՐՆԵՐԻ, ՄԻԱՅԵՐ

14 NOV 2009

Ա. ՌԻԿՈՎ

ՀԱՅ. Կ.Կ. (Բ) Կ.Կ. ՅԵՎ Կ.Վ.Յ.

ՄԻԱՅՅԱԼ ՊԼԵՆՈՒՄԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1927 թ. ԱԳՈՍՏՈՒ 11-ԻՆ ՄԱՍԻՎԸ
ԿՅԱՐԱՑԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԵԿՑԻԴՐ ԺՈՂՈՎՈՒՄ
ԿԱՐԴԱՅՎԱԾ ԶԵԿՈՒՅՈՒՄԸ

1377
3077

ՀԱՅ. ԿՈՄԿՈՒՄԻ ԿԵՆՏԿՈՄԻ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՅԵՐԵՎԱՆ

1927

ՀԱՅԿԱԾ ՄԹՎՈԼՈՐՏ

Բնկերներ, կուսակցության 14-րդ համագումարից հետո, կենտկոմի համարյա բոլոր նիստերը տեղի յեն ունեցել չափազանց լարված պայմաններում: Բավական է ժամանանչել անցյալ տարվա հուլիսյան ու հոկտեմբերյան և այս տարվա վերաբարյան ու ապրիլյան պլենումները: Կենտկոմի աշխատանքների այդ լարվածության պատճառը պետք է վորոնել վոչ այնքան մեր ամբողջ աշխատանքի բարդացման մեջ, վորքան «նոր», իսկ հետո «միացյալ» ոպողիցիայի հաճախակի յելույթների հետեւանքով ներկուակցական փոխհարարերությունների որվածության մեջ:

Սակայն կկ և կվ չ վերջին (ոգոսոսոսի) միացյալ պլենումը անկասկած բացառիկ տեղ կդրավի թե՛ իր լարվածությամբ ու տեվողությամբ և թե՛ քաղաքական նշանակությամբ:

Ինչո՞վ եր տարբերվում այդ տեսակետից կկ և կվ չ ոգոսոսյան միացյալ պլենումն այն նախորդ պլենումներից, վորոնք տեղի յեն ունեցել կուսակցության 14-րդ համագումարից հետո և վորո՞նք են այն յուրացատուկ հարցերը, վոր այս վերջին պլենումը պետք է լուծեր:

Այժմյան մթնոլորտը նախորդներից նրանով ե տարբերվում, վոր այժմ որված են միջազգային հարաբերությունները: Բնթացիկ քաղաքականության և վողջ միջազգային հարաբերությունների որակարգի մեջ դրված

ՀԱՅՈՒՆԻԳՐԱՖԻ ԱՌԱՋԻՆ ՏՄԱՐԱՆ
ՊԱՏՎԵՐ 4638
ԳՐԱԲ 337 Բ. ՏԻՐԱԺ 2000



9893 - 83

և ԽՍՀՄ գեմ նոր թշնամական պայքար մղելու, պատերազմ նախաղաղաստելու և պրովակացիոն միջոցներով պատերազմի առիթներ ստեղծելու հարցը։ Այս պարագաներում մեր առաջ ծառացել է յերկրի պաշտպանության յեղանակների հրատապ հարցը, մեր յերկրի պաշտպանունակությունն ուժեղացնելու խնդիրը, վորոնինիուսափելիորեն անդրագառնում և կուսակցության ամբողջ քաղաքականության, ինչպիս նաև մեր տնտեսական աշխատանքների վրա։

Նույն այդ հանգամանքներում առանձին նշանակություն ունեցան միացյալ ոպողիցիայի հակակուսական Փրակցիոնական հայտնի յելույթները և նրա կատարած սիստեմատիկ աշխատանքները, վորոնիք ուղղված եյին կուսակցության ամբողջ քաղաքականության գեմ։

Ոպողիցիայի վերաբերյալ հարցը պլենումի որակարգի 4-րդ հարցն եր կազմում։ Մինչդեռ պլենումի բացումից հետո անմիջապես նրա առաջ ծառացավ նրա և ոպողիցիայի միջև առաջացած իդեյական ու կազմակերպչական տարածայնությունների հարցը։ Ոպողիցիան փորձեց կրկին պլենումի քննության դնել տարածայնությունների հիմք հանդիսացող այն բոլոր հարցերը, վորոնիք բազմից քննության եյին առնվել կոնֆերնցիաներում, համագումարներում։ Այսպես՝ թե՛ պլենումից առաջ և թե՛ պլենումում ոպողիցիան ձգտում եր զիսկուսիոն կարգով կուսակցության քննության առաջանակացությունը բարձրացնելու համար՝ պատերազմի սպառնալիքի հանդեպ։

Այս հանդամանքը բավական դժվարացնում է պլենումի աշխատանքներին նվիրված իմ զեկուցումը։

Ցես կաշխատեմ ամբողջ բանավեճը, ոպողիցիայի վերաբերյալ ամբողջ հարցն առանձին լուսաբանել, վորոնիս իմ զեկուցման յերկրորդ մասը, իսկ առաջին մասը նվիրել պլենումի այն ամենագլխավոր վորոշումներին, վորոնիք վերաբերում են միջազգային քաղաքականության և մեր տնտեսական շինարարության հարցերին։ Պետք է առեմ, վոր դժվար և 2 ժամում քիչ շատ մանրամասն խոսել այն ամենի մասին, վոր տեղի ունեցավ պլենումում։ չպետք է մոռանալ, վոր պլենումը տեղեց տաս որ, և միմիայն սղագրությունները (առանց նրանութերի) 1000 յերեսից ավելի յեն։ Ուստի յես բաց կթողնեմ պլենումի աշխատանքների այն մասը, վորը մանրամասնորեն շարադրված և յերեկ և այսոր հրապարակված բանաձեկիրում, և կսահմանափակվեմ նըրանով, ինչ վոր եյականն ու գլխավորը և բնորոշում և ու պարզում պլենումի աշխատանքների ընթացքը և նրա բնդունած բանաձեկիրը։

Ի՞նչ եր ՍՊԱՍՈՒՄ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՊԵՆՈՒՄԻՑ

Ի՞նչ եր ոպասում կուսակցությունը կե և կվ. Հ-ի վերջին պլենումից։ Ի՞նձ ինվում և, վոր կուսակցությունը սպասում եր հետեւյալ յերեք հարցի լուծումը։

1. Տա միջազգային կացության ընդհանուր գնահատականը և հրահանգ այն մասին, թե ի՞նչ գործնական աշխատանքներ պետք է կատարել յերկրի պաշտպանունակությունը բարձրացնելու համար՝ պատերազմի սպառնալիքի հանդեպ։

2. Վերլուծի տնտեսական դրությունը և ցուց-

մունքներ տա նոր տնտեսական տարվա նախորյակին անհրաժեշտ գործնական աշխատանքների ձևոնարկելու համար, և, վեջարպես՝

Յ. Հուծի ներկուսակցական ողողիցիայի խնդիրը :

Ես կսկսեմ առաջին—պատերազմի վատանգի վերաբերյալ հարցից։ Միջազգային գրության և պատերազմի վատանգի մասին պլենումն ընդունեց մի ընդարձակ բանաձեվ, ի նկատի ունենալով թէ՛ Կոմինտերնի վերջին գործումները և՛ թէ՛ այն նոր հանգամանքները, գորոնք պարզվել են Կոմինտերնի Գործկոմի 8-րդ պլենումի նիստից հետո։

Այժմ տեսնենք, թե միջազգային հարաբերությունների մեջ տեղի ունեցած ի՞նչպիսի փոփոխությունների և կապիտալիզմի զարգացման ի՞նչպիսի յիրեվոյթների հետեւանքով և պատերազմն ակտուագարձ դարձ դարձել։

ԿՈՊԻՏԱԼԻԶՄԻ ՍՏԱԲԻԼԻԶԱՑԻԱՆ

Միջազգային գրությունը վերլուծելիս յելակեալ պետք ե ունենալ այն հարցը, թե համաշխարհային տընտեսության հետպատերազմյան քայլքայման և դաստիարակերի ու առանձին յերկրների միջև վերջին ժամանակներում տեղի ունեցած փոփոխությունների պայմաններում կապիտալիզմն ի՞նչ չափով և ի՞նչ ձեվերով և ստարիլիզացիայի յենթարկվել։

Ի՞նչ նոր արդյունքներ ե տվել կապիտալիստական ստարիլիզացիան։ Համաշխարհային տնտեսության հետպատերազմյան քայլքայման (վորը վերացնել անդոր ե) պայմաններում տեղի ունեցած ստարիլիզացիան մինչև այժմ վերականգնման բնույթ ե ունեցել և այժմ

կարող ե չարունակվել միայն այն դեպքում, յերբ բնդության ներքին և արտաքին չուկաները։

Ա. ՏՆՏԵՍԱԿԱՆ ՍՏԱԲԻԼԻԶԱՑԻԱՆ

Ստարիլիզացիայի պրոցեսը յերկու գծով է ընթանում—տնտեսական և քաղաքական։ Տնտեսական ասուպարիզում ստարիլիզացիան բնորոշվում է նրանով, վոր վերջին տարիներում կապիտալիզմը վոչ միայն անցել եր մինչպատերազմյան մակարդակից, այլ նաև ստեղծում է արտադրության տեխնիկական նոր հիմքեր։ Ընկ. Բուխարինն իր գեկուցման ժամանակ այս հանգամանքն ապացուցեց բազմաթիվ որինակներով։ Յես նրանցից միմիայն մի քանիսը կրեեմ։ Կապիտալիստական բոլոր յերկրներում, բացառությամբ Անդրիայի, բավականաչափ աճում ու ծավալվում է արդյունաբերությունը։ 1926 թ. Միացյալ Նահանգների արդյունահանությունը (օօնակ պրոմ.) հասավ նույն արդյունաբերության մինչպատերազմյան մակարդակի 150 տոկոսին։ արդյունագործությունը (օօն. պրոմ.) հասավ 139,8 տոկոսին։ Ֆրանսիայում արդյունաբերության մակարդակը հասավ մինչպատերազմյանի 124 տոկոսին, Գերմանիայում՝ 112 տոկոսին։ Անգլիան այս տեսակեաից գետ յետ է մնում և չկարողացավ 1926 թ. հասնել իր մինչպատերազմյան արդյունաբերության մակարդակին (կազմելով բնդամենը նրա 99,1 տոկոսը)։

Կապիտալիստական յերկրների արդյունաբերության աճման հետ զուգընթաց միծ փոփոխություններ են տեղի ունենում նաև արտադրության տեխնիկայի ու կազմակերպության ասպարիզում։ արտադրության մի-

ջոցներն զգալի չափով կատարելագործված են, և արդյունաբերության հիմնական կապիտալն այժմ անհամեմատ ավելի ուժեղ է, քանի պատերազմից առաջ:

Տեխնիքական բարելավումների ասպարիֆում ձեռքբերված նվաճումների մասին գաղափար կարելի յեկազմել թեկուղ մետաղաձուլական վառարանների վերաբերյալ տվյալների համաձայն՝ այսպես՝ Գերմանիայում 1913 թ. մի վառարանի միջին արտադրողականությունն ամսական 4,5 հազար տոնն եր, իսկ 1926 թվի ոգոստոսին այդ քանակությունը հասավ 10,1 տոննի. Միացյալ Նահանգներում 1924 թ. 13 հազար տոնն եր, իսկ 1925 թ. ոգոստոսին—15 հազար:

Գերմանիայում բանվորների թիվը միայն մի տարում—1925 թ. ոգոստոսից մինչև 1926 թվի ոգոստոսը—որդպատաճուլական արդյունաբերության մեջ իջավ 9 տոկոս, դրան զուգընթաց՝ ձուլվող մետաղի քանակն ավելացավ 26 տոկոս, իսկ մի բանվորի մինչպատերազմյան արտադրողականությունը բարձրացավ 44 տոկոս:

Ածխարդյունաբերությունը Գերմանիայում պատերազմից առաջ մերենացման եր յենթարկված 5 տոկ., իսկ այժմ—50 տոկոս. աշխատանքի արտադրողականությունը 15—20 տոկ. բարձր է մինչպատերազմյանց:

Միաժամանակ նոր տեխնիկայի հետեւանքով հետրզետե ավելի մեծ դեր են ոկում խաղալ հում նյութին նոր տեսակները, 1925 թ. արհեստական մետաքսի արտադրությունն մինչպատերազմյան մակարդակի հետ համեմատած՝ ավելացավ 556 տոկ., կառուչուկինը—283 տոկ., ալյումինինը—187 տոկ., նաևթինը—187 տոկ. և այլն:

Այս բոլորին համընթաց տեղի յեւ ունենում կապի-

տալի ուժեղ համակենտրոնացում—ստեղծվում է կապիտալիստական ձեռնարկությունների կազմակերպչական նոր ձեվեր, արդյունաբերությունը արեստացման և յենթարկվում և ուժաղանում են մենաշնորհային տենտենցները:

Բ. ՔԱՂԱՔԱԿԱՆ ՍՏԱԲԻԼԻԶԱՑԻՈՆ

Քաղաքական ստարիլիզացիան բնորոշվում է նրանով, վոր բավականաչափ ուժեղացել և բուրժուազիայի քաղաքական կարողությունը առանձին յերկրներում, լուծվել և այն բլոկը, վոր առաջ գոյություն ուներ խոշոր բուրժուազիայի և միջին ու սոցիալ-դեմոկրատական կուսակցությունների միջև։ Վորպես առանձին յերկրների բուրժուազիայի տղ, պահպանողական և ռեակցիոն խմբերի ուժեղացման կոնկրետ որինակներ կարող են համարվել հետեւյալ յերեվույթները։ Անզիւճում կառավարության զեկը պահպանողականների ձեռքին և, վորոնց շարքում ուժեղացել և պընդականների ազդեցությունը։ Ֆրանսիայում կառավարությունը կազմված է Պուանկարեյից և նրա կողմանիցներից։ Գերմանիայում հանրապետության նախագահը Հինդենբուրգն է, կենտրոնի և ազգայնականների միջեղ կոալիցիա յեւ ստեղծվել, նաևլիայում տերու տեսորեն և Փաշիզմը և այլն։

Սակայն այս ամենը դեռ չի ապացուցում, վոր կապիտալիզմը դուրս է յեկել իր հետապներազմյան ձրդնաժամից, այլ ընդհակառակը, եւ ավելի յեւ ուժեղացնում կապիտալիստական հասարակության հակասությունները և խորացնում կապիտալիզմի ձգնաժամը։

ԱՏԱԲԻԼԻԶԱՑԻՑԻՑ ԲՂԱՌՈՂ ՆՈՐ ՀԱԿԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ստաբիլիզացիայի պրոցեսը տեղի յեւ ունենում համաշխարհային տնտեսության հետաքատերազմյան քայլքայման սլայմաներում, յերբ բալկանիզացիայի յեւ յենթարկվում Յելլոպան, ավելի ու ավելի յեւ ուժեղանում առեվտրական ու արդյունաբերական պրոտեկցիոնիզմը մի ամբողջ շարք յերկրներում, գաղութները դուրս են գալիս իմպերիալիզմի իշխանության տակից, ոճում, ծավալվում և ԽՍՀՄ տնտեսական կարողությունը:

Կապիտալիզմի ծավալված արտաքրական հնարավորությունների հանդեպ հրեշտավոր չափերով բացակայում են չուկաները և ժողովրդական մասսաները սարսափելի աղքատության են մատնված: Գերմանիան իր վերսայլյան պարտքերը վճարելու համար պետք է ընդդարձակի իր արտահանությունը, չնայած՝ վոր ինքը զուրկ է բավականաշափ ներքին միջոցներից. Գերմանիայի հակոտնյան և հանդիսիանում Միացյալ Նահանգների տնտեսությունը, վորը տառապում է կապիտալի առատությունից. այն ժամանակ, յերբ Գերմանիան կարիք ունի արտաքին չուկայի, վորպեսզի մեծացնի իր արտահանությունը, Միացյալ Նահանգները և կապիտալն արտահանությունը: Առաջին հարցը (կապիտալի արտահանում) լուծելով, Միացյալ Նահանգների համար դժվարանում է յերկրորդ հարցը (արքանքների արտահանում), վորի հետեանքով միաժամանակ ուժեղանում են չուկաների համար միմյանց

դեմ պայքարող կապիտալիստական մի շարք պետությունների փոխադարձ ներհակությունները:

Իր ապրանքները վաճառահանելու նույնպիսի վըժվարությունների առաջ և կանգնած նաև ձափոնիան: Պատերազմի ընթացքում իր չուկաները յելլոպական յերկրների մրցությունից ազատելով և դրա չնորհիվ ընդարձակելով իր արտադրությունը, ձափոնիան մինչեվ այժմ չի կարողանում հարմարվել հետզետե ուժեղացող այն մրցությանը, վոր պատերազմից հետո տեղի յեւ ունենում համաշխարհային չուկաներում:

Համաշխարհային չուկան վերականգնելու և ընդգարձակելու անհնարությունն առանձնապես սաստիկ հարվածում է Անգլիային, վորի արդյունաբերությունը չատ մեծ չափերով կախված է նրա ապրանքների արտահանությունից և համաշխարհային առեվտրի պայմաններից:

ԱՏԱԲԻԼԻԶԱՑԻՑ ՅԵՎ ՆՈՐ ՊԱՏԵՐԱԶՄՆԵՐԻ

Ինչ յեղակացություններ պետք է հանել համաշխարհային տնտեսական այժմյան վիճակի վերլուծությունից, ստարիլիզացիայի պրոցեսի վերլուծությունից: Կապիտալիզմն ստարիլիզացյայի հետևանքով ընդհանուր առմամբ անցել է իր մինչչպատերազմյան մակարդակից: Մարքիլիզացիայի նախորդ ամբողջ լրջանում, վորը պայմանականորեն կոչվում է վերականգնման շրջան, միաժամանակ տեղի ունեցան բոլորովին նոր յերեվույթներ, հանդես յեկան նոր տարրեր ինչպես ուեխնիկայի, նույնպես և կապիտալիզմի կազմակերպչական ձեվերի ասպարիզում: Նոր յերեվույթն այն է, վոր այժմ չափազանց սուր բնույթ և սահման վաճառահանման չուկաների ընդարձակման հարցը:

Քաղաքականութեն այս կացությունն առաջ և բերում և ուժեղացնում ե առանձին յերկրների իմպերիալիստական տենդենցիները, խորացնելով նրանց փոխազարձ ներհակությունները և զնում աշխարհի նոր վերաբաժանման, նոր պատերազմի հարցը։ Այսպիսով ստարիլիզացիան ինքը պատերազմական ընդհարումների հնարավորությունն արագացնող գործոններից մեկն է հանդիսանում։ Աչա հենց այս և պատճառը, վոր այնպիսի իմպերիալիստական յերկրներ, ինչպես Անդրկան, վորոնց բարդավաճումն ու բարեկեցությունը կախված է գաղութային, կիսագաղութային և հետամնաց յերկրների շահագործումից, հանդեռ են գալիս վորպես նոր պատերազմի, բանվոր դասակարգի դեմ տնինա պայքարելու նախաձեռնողներ ու կազմակերպիչներ։ Այսպիսով ստարիլիզացիան ուժեղացնելով կատարալիստական տենդենցիները հանգում ե իր հակառակ դրության, վորն անխուսափելի կերպով պետք է համաշխարհային տնտեսության մեջ նոր ճգնաժամեր առաջ բերի։ Այժմ յան ըրջանի բնորոշ կողմն այն և, վոր կապիտալիզմը դեռ է շարտել պացիֆիստական դիմակը, վորի կարիքը նա զգում եր ստարիլիզացիայի առաջին ըրջանում, վորովհետեւ պացիֆիզմն այժմ արդելք է հանդիսանում նրա հետապա զարգացմանը։ Թեև այդ շարժումը մինչեւ այժմ առաջին հերթին ուղղված էր Անդրիայի դեմ, սակայն հետզհետեւ ավելի ու ավելի յե սպառնում չըշատել նաև մյուս յերկրների շահերը։ Զինական անցքերը խոչնդու են հանդիսանում վոչ միայն ստարիլիզացիայի դարգացման դեմ այն մտքով, վոր դադարում է իմպերիալիստական ճնշումը չին ժողովրդի նկատմամբ և չինական չուկան կրծատվում

կապիտալիստական յերկրների ապրանքների սպառման համար, այլ նաև այն իմաստով, վոր այդ անցքերը շատ ուժեղ ազդեցություն են ունենում և նպաստում են նաև մյուս գաղութային յերկրների (Հնդկաչին, Հոլանդական գաղութներ, Ճավա և այլն) ազգային ազատագրական և հեղափոխական շարժմանը։ Ուստի հենց այս պատճառով ել իմպերիալիզմն աշխատում է զանազան ձանապարհներով՝ բացահայտ ինտերվենցիայից սկսած մինչև ազգային-ազատագրական շարժման քայլայութը—ինեղդել նրան։

Կապիտալիստական սիստեմի խորը ճգնաժամերի գոյության մի այլ ապացույց կարելի յե համարել այն հանգամանքը, վոր կապիտալիստական յերկրների ներսում ստարիլիզացիայի հետեվանքով սրվում են դասակարգային ներհակությունները։ Բավական և հեշել Անդրիայում տեղի ունեցած գործադուլը, Ֆրանսիայում կրկնվող գործադուլները, Վիեննայում տեղի ունեցած բանվորների ապատամբությունը և այլն։ այս հանգամանքը—դասակարգային ներհակությունների անխուսափելի սրումը՝ վորպես կապիտալիստական ստարիլիզացիայի հետեվանք, ակնհայտնի կերպով ցույց է տալիս, թե վորքան հեղձեղուկ ե այդ ստարիլիզացիան և ինչպիսի ժամանակավոր բնույթ ե կրում նա։ Կապիտալիզմի՝ ստարիլիզացիայի յենթարկվելու փորձերը մի կողմից սրում են դասակարգային հարաբերությունները, ավելի յեն ուժեղացնում դասակարգերի ներհակությունները, մասսայական բանվորական շարժումը ձախացնում, մյուս կողմից՝ բուրժուազիային ստիպում են ամեն միջոցով ճնշել ու խեղդել բանվորական շարժումը։ Այս ցույց է տալիս, վոր մենք

կանգնած ենք մոտ ժամանակներում դասակարգային նոր բաղիսումների առաջ: Բուրժուազիան, գիտակելով այդ բաղիսումների անխուսափելիությունը, աշխատում է կանխել գրանց: Դրանով պետք է բացատրել այն հանդամանքը, վոր մի շարք յերկրներում փորձեր են արվում վատթարացնելու բանվոր դասակարգի իրավուան դրամիունը (Անգլիայում, Իտալիայում և մասամբ նաև Ֆրանսիայում), ինչպես նաև հաճախ դինաված ուժի յեն դիմում գործադրու արած բանվորներին դապելու համար: Միաժամանակ բուրժուազիան աշխատում է այլասերել բանվորական կազմակերպությունների վերաշերտերին (և վոր գլխավորն ե—վոչ առանց հաջողության), գնել, իր վարձկանը դարձնել բանվորական լիգերներին, վորպեսզի բանվորական կազմակերպություններին ել սգտագործի կազիտալիստների դասակարգի շահերի համար:

ԿՈՎԻՏԱԼԻՉՄԻ ՍՏՈԲԻ ԼԻՉԱՑԻԱՆ ՅԵՎ ԽՍՀՄ

Արդի պայմաններում Խորհրդային Միությունը հանդիսանում է այն գլխավոր գործոններից մեկը, վարոնք թույլ չեն տալիս կազիտալիզմին հասնել իր նպատակին՝ բանվորական և ազգային-ազատագրական շարժումների գեմ մզվող պայքարում: Այն փաստը, վոր մի հոկայական յերկրում գոյություն ունի պրոլետարիատի դիկտուրա, վոր ԽՍՀՄ բանվոր դասակարգը բարոյական ու նյութական ուժանդակություն է ցույց տալիս բոլոր ճնշված դասակարգերին և ազգերին, հեղափոխական շատ մեծ ազգեցություն և ունենում է ինչպես բանվոր դասակարգի, այնպես և ազգային-ազատագրական շարժման կազմակերպման գործում իուզոր

գերեւ խաղում: Այս իսկ պատճառով իմպերիալիստական յերկրների քաղաքականության մեջ այսպես կոչված «ոռուսական հարցը», «չինական հարցը» և հեղափոխական շարժման գեմ մզվող պայքարը նույնանում, մի ամբողջություն են կազմում, վորի հետեւանքով կապիտալիստական աշխարհն ավելի ագրեսով և դառնում դեպի ԽՍՀՄ:

Կապիտալիստական աշխարհի ու ԽՍՀՄ փոխարձ հարաբերությունների սրմանը նպաստում է նաև մեր տնտեսության աճումը: Յերկրին արդյունաբերացման յենթարկելու վճռական կուրսը, վոր ընդունել ենք մենք, ինչպես նաև արտաքին առեվտրի մենաշնորհը թույլ չեն տալիս, վոր իրագործվեն կազիտալիստական յերկրների հույսերը, այն և տեսնել ԽՍՀՄ կապիտալիստական արդյունաբերական յերկրների ազրարային հավելվածի դերում: Մեր վերջին տարիների հաջողությունները ցույց են տալիս, վոր ԽՍՀՄ տարեց տարի ավելի ու ավելի յեւ ուժեղանում, վոր «ոռուսական պրոլետիզմ» կապիտալիզմի շահերի տեսակետից նպաստվոր լուծումը գրանով իսկ հետզհետեւ ավելի յեւ դժվարանում:

Գետք և հաշվի առնել, վոր կապիտալիստական աշխարհի և ԽՍՀՄ փոխարաբերությունների մեջ վերջին տարիներում մեծ փոփոխություններ են կատարվել: Այն մոմենտը, վոր մենք անվանում ենք գաղարի սկիզբ, 1921 թ. նըանով եր ընորոշվում, վոր կապիտալիստական յերկրները, համաշխարհային պատերազմի և հեղափոխական ընդհարումների պատճառով թուլացած, ի վիճակի չելին լուծելու Խորհրդային Միության գոյության հետեւանքով առաջացած հակասություննե-

ւը, ուստի և ստիպված եյին միատեղ ապրելու վորեւ ձեզ գտնել: Սակայն այժմ կացության փոփոխությունն այն և, վոր յերկու կողմն ել ամբացել են, և դրա հետ միասին նույն չափով աճում ու սրվում են յերկու սիստեմների միատեղ գոյության հակասությունները: Եյորհրդային Միությունն իմպերիալիստական պետքյունների հարձակման գլխավոր առարկան և դանում: Եյորհրդային Միության դեմ մղվող պայքարը միաժամանակ դանում և բանվորական շարժման, ազգային-ազատագրական շարժման դեմ մղվող պայքար:

Աչա թե ինչու ԽՍՀՄ դեմ միասնական ճակատ կազմելու հարցերը կապվում են Զինաստանի դեմ պայքարելու անհրաժեշտության հետ, այլ դեպքերում ընդդեմ բանվորական շարժման, ընդդեմ կոմինտերնի մը դվոր կապիտալիզմի պայքարի հետ կապվում:

Կապիտալիստական աշխարհն իր տրամադրության ասկ յեղած բոլոր միջոցներով պիտի աշխատի անվտանգ գարձնի կամ վոչնչացնի ԽՍՀՄ, վորպես բանվորական պիտություն, վորպես մի գործոն, վորն ինքնին հակազդում և կապիտալիզմի հետագա տմբացման վրա ու կազմակերպում և հեղափոխականացնում և բանվորական շարժումը ամբողջ աշխարհում: ԽՍՀՄ դեմ միասնական թշնամական ճակատ կազմակերպելը, իսկ հետո ԽՍՀՄ դեմ պատերազմ սկսելը իմպերիալիզմի քաղաքականության հրատապ ինքիրներն են դարձել, վորովհետեւ այլ ճանապարհով նա հույս ունի Զինաստանը ինեղելու, մյուս բոլոր գաղութային ժողովությունները, ինչպես բանվորների հեղափոխական շարժման դեմ մղվող պայքարը հեշտացնել:

Սակայն, չնայած դրան, միասնական ճակատ ստեղծելու փորձերը դեմ են առնում ինչպես վողջ կապիտալիստական աշխարհի ներքին հակասություններին, այնպես ել Խորհրդային Միության կողմից վարդող խաղաղության հետեւղղական քաղաքականությանը: Բայց և այնպես մենք պիտի յելնենք այն փաստից, վոր ԽՍՀՄ դեմ նոր պատերազմի ծրագիրը նախապատրաստվում է ամեն ուղղությամբ, այսինքն՝ և՛ դիվանագիտական, և՛ հաօրաբակական-քաղաքական, և՛ տոխոնիքական ուղղություններով:

ՊԱՏԵՐԱՋՄԻ ՆԱԽԱԳԱՏՐԱՍԱՏՈՒԹՅՈՒՆ ԲԵԴԴԵՄ ԽՍՀՄ

ԽՍՀՄ դեմ ծրագրվող պատերազմական արշավանքի կազմակերպման իդեոլոգներն ու զեկավարներն անդիմական պահպանողականներն են, վորոնց փորձերն այդ ասպարիզում յերկու ուղղությամբ են ընթանում: —
1. Կրանք փորձում են ոգտագործել կապիտալիստական աշխարհի և ԽՍՀՄ փոխադարձ անտագոնիզմը, միասնական ճակատ կազմակերպելով ԽՍՀՄ դեմ՝ հեղափոխական պրոսպագնոդայի, բանվորական շարժման և կոմինտերնի դեմ մղվող պայքարի դրոշի տակ, և 2. ԽՍՀՄ դեմ միասնական ճակատ կազմելով՝ անդիմական պահպանողականներն ոգտագործում են Վերսայիլ դաշնագրի հետեւղանքով առանձին յերկրների միջև ստեղծված ներհակությունները խոստանալով ԽՍՀՄ հաշվին ուղղել վերսայլյան թերությունները: Պատերազմի դիվանագիտական նախապատրաստական այդ փորձերը կարելի յետեսնել մի շարք միջազգային խորհրդակցու-

թյունների ժամանակ և Ազգերի Լիգայի վերջին նստացքանում :

Խորհրդային Միության գեմ.թշնամաբար տրամադրված «միջազգային մամուլը», այս թվում նաև սոցիալ-գեմոկրատականը, ԽՍՀՄ գեմ ծրագրվող պատերազմի նախապատրաստությունը փորձում և հիմնավորել նրանով, վոր անհրաժեշտ ե կովել այսպես կոչված «կարմիր իմպերիալիզմի դեմ»։ Խորհրդային Միության հասցեյին հորինած այս աղաղակով, հրեշտակոր ստով II հնտերնացիոնալն ու Ամստերդամն իրենց ուժերի չափով ոգնում են կապիտալիստներին։ Բանն այն է, վոր ԽՍՀՄ գեմ պատերազմ կազմակերպելու համար պետք ե ընկճել բանվորների դիմադրությունը կտմ նրանց խարել։ Այս նպատակով բուրժուազիան, իսկ նրան հետ նաև Ամստերդամն ու II հնտերնացիոնալն իրենց տրամադրության տակ յեղած բոլոր միջոցներով աշխատում են անվանարկել, սեփացնել Խորհրդային Միությունը, հայտարարելով, վոր Խորհրդային Միության վարած քաղաքականությունն իմպերիալիստական, հակարանվորական քաղաքականություն և, և այլն։ Գրանով բուրժուազիան աշխատում և թուլացնել այն համականքը, վոր բանվորական լայն մասսաները սածում են դեպի Խորհրդային Միությունը, և գրանով իսկ կազմալուծել ամբողջ բանվորական շարժումը, մորն սակենագլխավոր արգելքն և հանդիսանում ԽՍՀՄ գեմ պատերազմի ձեռնարկելու գործում։

Թե ինչպես են սոցիալ-գեմոկրատներն ուղղակի ձեվով ոգնում բուրժուազիային՝ պատերազմի նախապատրաստության գործում, այդ բանի ապացույց կարող և համարվել զինվորական այն նոր որենքը, մորի նա-

խագիծը Փրանսիական սոցիալ-գեմոկրատիայի լիդեր Պոլ Բանկուրը պարլամենտ և մացրել։ Այդ որենքի համաձայն պատերազմի ժամանակ ամբողջ իշխանությունը վողջ ազգաբնակության, բոլոր հասարակական կազմակերպությունների, վորոնց թվում նաև արհմիությունների նկատմամբ հանձնվում և բուրժուական դիկտոտուրային։ Իմպերիալիզմի ոգնականների այս դերը պակաս չափով չեն կատարում նաև այսպես կոչված ձախ սոցիալ-գեմոկրատները, ինչպես Լեվին՝ Գերմանիայում, ինչպես նաև կոմունիզմից վտարված ույլարա ձախ ունենագատները։ Զախ սոցիալ-գեմոկրատները, աջ առաջնորդների բուրժուական քաղաքականությունը ձախ Փրանքներով քողարկելով, ուժեղացնում են բանվոր դասակարգի իլյուզիաները, նրան խարում են և հենց զրանով կասեցնում պրոլետարիատի դասակարգային գիտակցության աճումը։

Ույլարա ձախ ունենագատները, զրպարտելով Խորհրդային Միությունը, թուլացնում են բանվորների համակրանքը գեղի ԽՍՀՄ և նրանց ուշագրությունը շեղում են նախապատրաստվող պատերազմից։ Այդպիսով՝ պնդանակատ պահպանողականներից մինչև ձախ սոցիալ-գեմոկրատները և կոմինտերնից վտարված կորչն ու Մասլովը և սրանց նմանները կազմվում և միանական մակատ, վորն իդեոլոգիապես նախապատրաստում և այն պատերազմը, վոր ուղղված և առաջին հերթին ԽՍՀՄ գեմ։

Բազմական նախահաշիվների, ուազմական արգյունաբերության, քիմիական ու ավիացիոն արդյունաբերության հսկայական աճումը ցույց է տալիս, թե կա-

պիտալիստական աշխարհն ինչպիսի տենդային լարվածությամբ և պատրաստվում նոր պատերազմի:

Իջարկե, ինչպես 1914 թ. իմպերիալիստական պատերազմի նախորյակին, այնպես և այժմ, պատերազմի պատրաստությունը կատարվում է խաղաղությունն ապահովելու նշանաբանի տակ, վորովհետեւ բուրժուական քաղաքագետները լավ դիտեն, վոր «յերբ պատերազմ ես նախապատրաստում, պետք է խաղաղության մասին խոսե»:

Ի՞նչ ուեալ հիմք ունենք առելու, վոր ԽՍՀՄ դեմ մղվելիք պատերազմն այժմ արդեն որակարգի հարց և դարձված: Բավական է թվել վերջին տարվա անցքերը, և այդ բանն ապացուցված կարելի յէ համարել. դրանք են՝ Պեկինի մեր գեոպանատան վրա կատարված հարձակումը, Արկոսի վրա կատարված հարձակումը, Անգլիայի կողմից մեղ հետ դիմանագիտական՝ հարաբերությունների խզելը, բրւեժուական մամուլում մեր դեմ դործվող հարձակումների ավելանալը, անդլիացիների կողմից մեր դեմ միասնական ճակատ կազմելու դիվանագիտական ուժեղ գործունեյությունը, նրա կողմից այդ նպատակով տնտեսական ճնշման միջոցներ գործադրելը և այլն: Բուրժուական քաղաքագետները գիտակարգար աշխատում են բուրժուական յերկրների պրոլետարիատի գասակարգային պայքարի ամեն մի սրում վերագրել «Մոսկվայի ազգեցությանը», վորպեսզի դրանով արդարացնեն ԽՍՀՄ դեմ նրանց կողմից կազմակերպվող արշավանքը: Զե՞ վոր նույնիսկ Վիեննայի սոցիալ-դեմոկրատ բանվորների ապատամբությունը վերագրվեց Մոսկվայի գործակալներին: Այս բոլորի հետեւանքով Մոսկվան, վորպես վրութարա-

կան շարժման ոջախ՝ վոչնչացնելու ցանկությունը հետզհետեւ ավելի ակտուալ բնույթ և ստանում:

Մեծ Բրիտանիայի արտաքին գործերի մինիստրության հետ սերտ կերպով կապված վոչ-անհայտ Ավգուստին իր վերջին գրքերից մեկում—«Գերմանիա և Յեվրոպա»—պրում ե, վոր «Ծուսաստանը կանգնած է ինչպես մի վոթորկաբեր ամպ և մի մշտական սպառնալիք է կապիտալիստական աշխարհի ստարիլիզացայի դեմ», վոր Ծուսաստանի դեմ մղվելիք ամենալավ քաղաքականությունը—այդ «միանական ճակատն ե»: Ուստի նա Գերմանիային համոզում է մտնել այդ միանական ճակատի մեջ և նույնիսկ թվում ե, թե դրանից Գերմանիան ի՞նչ ոգուտ կստանա: Կարելի յե անթիվ ցիտաներ բերել, վորոնք ցույց են տալիս, թե ի՞նչպես ԽՍՀՄ դեմ միանական ճակատ է ստեղծվում, ինչպես զանազան քաղաքական խմբակցություններ միմյանց համոզում են այդ ուղղությամբ: Դրանց ընդհանուր իմաստն այն է, վոր անհրաժեշտ է ԽՍՀՄ դեմ պատերազմ մղել՝ մյուս յերկրներում հեղափոխական շարժման դեմ պայքարելու, կապիտալիստական աշխարհի հակասությունների չնորհել հետզհետեւ ուժեղացող ու սրբադանվորական շարժման և գաղութային յերկրների ազգային-ազատագրական շարժման՝ դեմ պայքարելու համար:

Այդ տեսակետից ԽՍՀՄ դեմ պատերազմ մղելն ստանում է նախազգուշացման միջոցի բնույթ, վորով պետք է կանխել մյուս յերկրներում ծագելիք սոցիալական հեղափոխությունը, գաղութային յերկրներում ծավալվող ազգային-ազատագրական պայքարը և կապիտալիստական սիստեմի հակասությունների հետեւ

վանքով ավելի մեծ չափեր ընդունով բանվորական շարժումը:

Վորքան ավելի շատ գժվարություններ տուղծվեն կապիտալի համար, — իսկ այդ գժվարություններն մեծանում են և կմեծանան կապիտալիզմի արտադրական հնարավորությունների աճման և միաժամանակ անհրաժեշտ շուկաներ չունենալու հետեվանքով, — այնքան ավելի սուր բնույթ կընդունի այն թշնամությունն ու տառելությունը, վոր կապիտալիստական աշխարհը տաճում է գեղի Խորհրդային Միության համեմատաբար ել ավելի արագորեն զարգացող ուժին ու նշանակությունը:

ՅԵՐԲ ԿՍԿՍՎԻ ՊԱՏԵՐԾՎՄԸ

Կենտկոմի պլենումում վեճ ծագեց նաև այն ժամին, թե յե՞րբ կարող է սկսվել պատերազմը: Այս ժամին յերկու ծայրահեղ տեսակետ հանդես բերվեցին, — մի տեսակետի արտահայտիչն եւ ընկ. Ռուբինսկին, մյուսինն ընկ. Զինովյեվը:

Ընկ. Ռուբինսկին դտնում էր, վոր մենք չափական-ցնում ենք պատերազմի վտանգը, վոր մոտակա տարիներում չի կարող պատերազմ ծագել, վոր նրա շահսերը այնքան ել հավանական չեն: Ընկ. Ռուբինսկին իր տեսակետը ձեվակերպեց այսպես առած «միջակադրորեն», նա ասաց, վոր իմ կարծիքով, ներկայումս մոտավորապես 25 տոկոսը պատերազմի կողմնակից են, իսկ 75 տոկոսը պատերազմի դեմ: Ընկ. Զինովյեվն ել այլ կերպ եր մտածում: Նա պնդում էր, վոր «պատերազմի հավանականությունը» տերմինն արդեն անբավարար է և վոր, նրա կարծիքով, բանաձեղում կարճ ու վորոշ

այժմ պետք է տուի, վոր պատերազմն անխուսափելի յի: Պլենումը յերկու տեսակետն ել վանեց: «Խաղաղ գաղար» հասկացողությունը (մի տերմին, վորն առաջինը ընկ. Լենինն է մացրել) իր մեջ է առնում. 1) կարծատեղության հանգամանքը և 2) պատերազմի անխուսափելիության հանգամանքը: «Անխուսափելիության» հասկացողությունը կոնկրետ կերպով չի վորոշում պատերազմի ճիշտ ժամանակը: Ներկա պարմաներում նորն այն է, վոր մոտակա տարիներում, իսկ գործի և մոտակա տարին, այդ «անխուսափելիությունը» կարող է իրականանալ:

Այդ իսկ պատճառով պլենումն այնպիսի ճեղակերպությունը ընդունեց, վորը մատնանշում է ինչպես պատերազմի պատմական անխուսափելիությունը, այնպես ել նրա հավանականությունները մոտակա տարիներում:

Բայց քանի վոր խաղաղության համար մզգով պայքարի չափանիքը դեռ ևս սպառված չեն, այդ իսկ պատճառով պլենումը մեր քաղաքականության ամենագյուղավոր խնդիրը զարձրեց պատերազմն առավելագույն չափով հետաձեկությունը: Մեր արամագրության տուկ գեռ ևս հնարավորություններ կան այդ ուղղությամբ պայքարը արագ չարունակելու: Արդյոք մեղ կը հաջողվի մոտակա տարիներում պատերազմից խուսափել կամ յերկարատե կամ կարձատել ժամանակով հետաձեկել, վոչ վոք վաղորոք այդ չի կարող ասել:

Ընկ. Զինովյեվի այն սպահանջը, թե ոեղոյուցիւյում պիտի մացնել միայն այն հիշատակությունը թե պատերազմը «անխուսափելի յի» սխալ եր և վտանգավոր: Պետք է և այն ասել վոր ընկ. Զինովյեվը, ինչ-

ողես հաճախ ենքան պատահում, այս պլենումում ևս
ինքն իրեն հերքեց, հայտարարելով, վոր սպողիցիայի
դեմ ձիչտ քաղաքականություն վարելու գեղքում կա-
րելի կլիներ «պատերազմը բավական յերկար ժամանա-
կով հետաձգել»: Իսկ մի այլ տեղում նա արդեն այնքան
հեռու յե գնում, վոր խոսում ե պատերազմը «կան-
ինելու» հնարավորության մասին: Մերձավոր ժամա-
նակում ուղմական ընդհարումներից խուսափելու հա-
մար ի՞նչ հնարավորություններ մենք ունենք: Պատե-
րազմը հետաձգելու գլխավոր հանգամանքը պատերազ-
մի սոցիալական վտանգն և: Կապիտալիստական աշ-
խարհը յերկում և կրում, վոր ԽՍՀՄ դեմ ձեռնարկած
ոլաներազմի հետեւանքով շատ դեպքերում կարող և
պրոլետարական հեղափոխություն սկսվել: Այս հան-
գամանքն ավելի կարեոր ե քան կապիտալիստական պե-
տությունների միջև գոյություն ունեցող զանազան հա-
կառություններն ու ներհակությունները, վորովհետե
այդ վտանգի հետ և կապված այն հիմնական հարցը,
թե ինչ վիճակ կատեղծվի պատերազմի դեպքում Յեփ-
րովայում, կարո՞ղ ե իր գոյությունը շարունակել կո-
պիտալիստական աշխարհը, և արդյո՞ք պատերազմից
հետո ո՞վ կլինի աշխարհը զեկավարող ուժը—բանվոր
դաստերազը թե՝ կապիտալիստները: Բացի սրանից
մենք ունենք պատերազմից խուսափելու նաև այլ հնա-
րավորություններ ընդհանուր քաղաքականության աս-
պարեզում: Այդ հնարավորություններն են ինչպես ո-
րինակ ԽՍՀՄ տնտեսական շահագրգոռության ուժեղո-
ցումով և այլն: Մեր ընթացիկ քաղաքականության մեջ
մենք պետք ե առավելագույն չափով այդ և նման հան-
գամանքները ոգտագործենք: Խորհրդային պետու-

թյունը պետք ե բոլոր միջոցները ձեռք առնի, վորպես-
դի առավելապես յերկարացնի խալաղ դադարի այս
ըրջանը, վորպեսզի հետաձգի պատերազմական ընդհա-
րումները, վորքան միայն այդ հնարավոր և: Սակայն
մենք պետք ե նկատի ունենանք, վոր պատերազմի վր-
անդն այժմ ուեալ վտանգ ե և ըստ այս ել մենք պետք
ե ձեռք առնենք յերկրի պաշտպանունակության ան-
հրաժեշտ բոլոր միջոցները:

ԱԳՈԳԱ. ՊԱՏԵՐԱԶՄԻ ԲՆԱԿՑԹԸ

Ինչո՞ւ ե տարբերվելու⁹ ապագա պատերազմը նա-
խորդներից: ԽՍՀՄ-ի դեմ ձեռնարկվելիք ապագա պա-
տերազմը, թե 1914 թվի իմպերիալիստական և թե բո-
րոր նախորդ այլ պատերազմներից ոկզրունքորեն նրա-
նով և տարբերվելու, վոր նու կրելու յե դասակարգային
բնույթ, և այդ բնույթն արտահայտվելու յե չափազանց
պարզորու կերպով: Բոլոր նախորդ պատերազմները
մզկել են տարբեր պետությունների միջև, սակայն
ԽՍՀՄ դեմ մզկելիք պատերազմը կլինի դասակարգային
պայքար, բուրժուազիայի կողմից բանվոր դասակար-
գի—աշխարհի միակ պրոլետարական պետության դեմ
մզկող պատերազմ: Այդ պատերազմն անխուսափելիո-
րեն կապվելու յե բուրժուազիայի կողմից բուրժուա-
կան յերկրների պրոլետարիատի դեմ մզկող կատաղի
զատկարգային պայքարի հետ: Այսուղից ել բզիսում
են պրոլետարական կոմինոր խզունզներն ի գեալ պա-
տերազմի: Այդ գեալքում կոմինորները, վորպես բանվոր
զատկարգի կուսակցություն, պետք ե կրկնի այն,
ինչ վոր ասում եր Վլագիմիր Իլյիչն իր «Կողմնակի
մարգու իորհուրդներ»-ում: «Լավագույն բանվորնե-

րից կազմված ջոկատներ կանգնեցրեք, զինեք նրանց հրացաններով ու սումբերով և «բոլորս կիռառը պէնք, բայց թշնամուն մոտ չենք թողնի» լոգունդով։ Այս նըշանակում ե, վոր բուրժուական յերկրների պրոլետարիատը պատերազմի դեպքում պետք է ԽՍՀՄ դեմ սկսված պատերազմը վեր ածի քաղաքացիական պատերազմի ընդդեմ բոլոր յերկրների կապիտալիստների՝ նպատակ դնելով բանվոր դասակարգի ձեռքով իշխանությունը խլել։

Եեթե 1914 թ. պատերազմը բացառիկ թափով հեղափոխական ուժեղ շարժումներ առաջ բերեց համարյառուր յերկրներում և բանվոր դասակարգին հաղթություն պարգևեց մեր պետության մեջ, չունդարիայում և Բավարիայում, ապա անկասկած ե, վոր պատերազմը, վորպես ինստ դասակարգային պատերազմ, պետք ե ել ավելի ուժեղ հեղափոխական շարժումներ առաջ բերի, քան այդ կատարվեց իմպերիալիստական պատերազմից հետո։ Ահա այս հանդամանքը հանդիսանում է կապիտալիստական աշխարհի վեմ ապագա պատերազմում մեր ունենալիք հաղթանակի նախադրյալներից մեկը։ Սակայն պատերազմի գեղագում յերկոսության պրոլետարիատն այլիս չի կարող բավականանալ իր յերկրի բուրժուազիայի պարտության հին լոգունդով։ Բանվոր դասակարգն այդ դեպքում պետք է կովկի հանուն ԽՍՀՄ հաղթանակի, բոլոր հնարավոր միջոցներով ակտիվ սպնություն հասցնելով բանվորական պետությանը։

Մեզանում, մեր յերկրի ներսում, սոցիալիստական հայրենիքի պաշտպանության լոգունդն ամենագլխավոր լոգունդն է հանդիսանում վոչ միայն պրոլետարիատի համար, այլ նաև ամբողջ աշխատավոր մասսայի հա-

մար, վորի հեղեմոնն է մեր պրոլետարիատը։

Թուրլ տվե՛ք, ընկերնե՛ք, սրանով եւ վերջացնել իմ գեկուցման այն մասը, պատերազմի դասակարգային բնույթի պատճառով, վոր վերաբերում է միջազգային դրությանը։

ՆԱՐ ԿԱՅԱԽԹՅԱՆ ԱՆԴՐԱԴԱՐՁՈՒՄԸ ԽՍՀՄ ՏՆՏԵՍԱ-
ԿԱՆ ԶԱՐԴԱՐՄԱՆ ՎՐԱ

Հետեւյալ հարցը պլենումում տնտեսական աշխատանքի հարցն եր, վորի վերնագիրը համեստաբար գրված եր «1927—28 ա. ստուգիչ թվերը կազմելու տնտեսական դիրեկտիվների մասին»։

Հարկավոր եր լուծել այն հարցը, թե նոր կացությունն ի՞նչպես կանդըրադառնա տնտեսական աշխատանքի սոցիալիզմի շինարարության վրա և դրան համապատասխան՝ կուսակցության կողմից ի՞նչ դիրեկտիվներ պետք է տրվեն տնտեսական աշխատանքի համար։

Նոր կացությունը, անշուշտ, մեր տնտեսական շինարարության վրա պետք է անդըրադառնա չնորհիվ յերկու հանդամանքի՝ Առաջին՝ վորովհետեւ նոր կացությունը պատճառ է զանումը մեր պետության պաշտպանության համար արվող ծախսերի տվելանալուն, (չե՞ վոր մինչեւ այժմս պաշտպանության կարիքների վրա մենք ավելի քիչ ելինք ծախսում, քան այն դումարի կեսը, վորը խաղաղ ժամանակ ցարը ծախսում եր). յերկրորդ՝ վորովհետեւ Մեծ Բրիտանիայի հետ դիվանագիտական հարաբերությունների և առեվտրական պայմանագրի խորմը անխուսափելիորեն անգլո-ռուսական առեվտրի դադարեցում և առաջ բերում։

Անգլիայի այն փորձերը, վորով նա ուզում և իրենից կախված յերկրներում, անգլիական կապիտալից կախում ունեցող յեվրոպական բանկերում և ձեռնարկություններում Խորհրդային Միության դեմ Փինանսական-անտեսական բոյկոտ կազմակերպել—կարող են վորոշ վնաս հասցնել:

Վերջերս մի այսպիսի դեպք պատահեց: Մի խոչը Փիրմա (վո'չ անգլիական), գեռես անգլո-ռուսական հարաբերությունների խզումից առաջ, յերկարանիվ վարկ առաջարկեց մեզ: Խզումից հետո, յերբ մենք այդ առաջարկությունն ուղարկործել ուզեցինք, բանկերն այդ Փիրմային վարկից զրկեցինք և նրան սնանկության հասցըին: Մի շարք հիմքեր կան յենթագրելու, վոր այդ անգլիական կապիտալից կախում ունեցող բանկերի կողմից արվեց Անգլիայի ճնշման ներքո:

Այս որինակից պարզ կերպով յերեվում և թե Անգլիան ինչպիսի միջոցների յե դիմում մեր դեմ մղվող կովում:

Սակայն միջազգային Փինանսական և անտեսական հարցերում Անգլիայի ազգեցությունը (համենայն դեպս յեվրոպական խոչը յերկրներում, և չխոսենք Ամերիկայի մասին) խիստ սահմանափակ է, այդ յերկրներից չառերի դեմ Անգլիան մրցակցության կորվ և մղում: Մեզ հետ կնքվող գործարքների վերաբերմամբ վերջին տարիներս վատահությունը խիստ ուժեղ չափով աճել է, վորովհետեւ վոչ մի դեպք չի յեղել (և հետադաշտումն ել չի լինի), վոր մեր անտեսական որդաները վորեմ բանում խախտած լինեն իրենց հանձն առաջ պարտավորությունները: Մինչեւ անգլո-ռուսական հարաբերությունների խզումն ուսարերկրյա պետու-

թյունների հետ ունեցած մեր վարկային հարաբերությունները տարի զարգանում ելին և ներկայումս բավականի մեծ չափների յեն հասել:

Մեզ անհրաժեշտ և այժմ միջոցներ ձեռք առնել, վորպեսզի ուրիշ յերկրներում մեր առեվտրական կապերն ընդարձակենք և այնպիսի չափով վարկեր ստանանք, վոր մեր արտաքին առեվտրական հարաբերությունների զարգացման առմաղք կարող ե մի քիչ յետ մնալ, վորը, պետք ե առնել, չի կարող մեզ համար սպառնալիք հանգիսանալ, յեթե նկատի ունենանք մեր անտեսության ներկա մակարդակը:

Առաջիկա տարվա անտեսական հեռանկարները վորոշելիս անհրաժեշտ և նաև հաշվի առնել, վոր կարող ե պատահել առաջիկա տարում, կամ նրա հաջորդ տարում լավ բերք ըլինի: Մեր հողագործության պատմությունը ցույց ե տալիս, վոր համարյա վորու կամոն յուրաքանչյուր 3-4 տարին մի անգամ չորային և լինում և անբերրիություն: Մենք գեռես չենք կարողացել մեր գյուղական անտեսությունը չորային շնչաններում այնպես վերակազմել, վորպեսզի վորեմ չափով յերկիրն ապահովենք անբերրիությունը կրկնվելու գեղքերից: Այդ պատճառով անհրաժեշտ և այժմ ևեթ նախազուշական միջոցներ ձեռք առնել:

Այս բոլոր փաստերը և հատկապես մեր միջազգային գրության սրումը ի՞նչպես պետք և անգրադառնան մեր անտեսական քաղաքականության վրա:

Պլենումն այդ հարցին այսպես պատասխանեց .— «Միջազգային կացության փոփոխման հետ կապված պեղիքիկ խնդիրներին լուծում տալը վոչ մէ գեղաքում շպետք և խախտի կուսակցության կողմից սահմանված տնտեսական շինարարության ընդհանուր ծրագիրը»: Պլենումում տված իմ գեկուցման մէջ այդ հարցի վրա կանգ առնելով յես ասացի, վոր կուսակցության ծրագիրը, վորի նպատակն ե յերկիրն ինպատրալացման յենթարկել, ավելացնել բանվոր դասակարգի և սոցիալիստական սեկտորի տեսակարար կրչոն ամբողջ ժողովրդական տնտեսության մէջ, սպանել բնակչության չքավոր խավերին, աջակցություն ցույց տալ միջակին, կովել կուրակի շահագործական տենդենցների գեմ՝ լավագույն՝ ծրագիրն ե հանդիսանում նաև ԽՍՀՄ գեմ պատրաստվող ուազմական հարձակումը յետ մղելու տեսակետից: Վորքան մէծ ինեն սոցիալիստական շինարարության ասպարիզում ձեռք բերած մեր հաջողությունները, վորքան մենք ավելի ամրացնենք բանվորի և գյուղացու դաշնքը, այնքան ավելի յերկիրը պատրաստ կլինի հակահարգած տարու մեր գեմ պատրաստվող ուազմական հարձակմանը: Սոցիալիստական շինարարության ճանապարհին ունեցած մեր ամեն մի հաջողությունը՝ ամբողջ աշխարհում բանվոր դասակարգի նորանոր հրակայական խավեր և քաշում գեպի մեր կողմը: Ինդուստրալացումը, արդյունաբերության զարգացումը, յերկրի պաշտպանումակության բարձրացման հիմքն են հանդիսանում—հատկապես այդ վերաբերում ե ծանր ինդուստրիալի և քիմիական արդյունաբերության զարգացմանը:

Ուստի պատերազմի վերահաս վտանգից վոչ միայն չի հետեւում թե, ինդուստրալացման վերաբերող կուսակցության ընդունած տնտեսական քաղաքականությունը պետք ե փոխվի, այլ ընդհակառակը, անհրաժեշտ ե ավելի ևս մեծ լարվածությամբ, քան մինչեւ այժմս, արագացնել յերկրի ինդուստրալացման պրոցեսը:

ՆԱՐ ԴԺՎԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Առաջիկա տարվա դժվարությունն այն ե, վոր ինդուստրալացման համար բավականաչափ արագ տեմպ ապահովելով .—այդ հակայական ծախսեր և պահանջում,—անհրաժեշտ միջոցներ հատկացնել այն կարիքներին, վորոնք տուաջ են գալիս յեկող տարվա հնարավոր անթերրիության գեպի համար տեսնվող պատրաստության, պատերազմի սպառնալիքի, պաշարներ (հաց, վառելիք, հում նյութեր, վալյուտա և այլն) պատրաստելու հետևանքով. միջոցներ, վորոնք անհրաժեշտ են ինչպես տնտեսական նպատակների, նույնպես և պաշտպանության համար:

Այս բոլոր ինդիբներին լուծում տալու դժվարություններն այն են, վոր տնտեսական ընդանառությունից մեծ քանակությամբ նյութական արժեքներ են վերցրվում և վորու ժամանակով «մնանած կավիտալ» դարձում: Յես գործին տեղյակ ընկերներին ինդրել եյի հաշվել, թէ մոտավորապես ի՞նչ գումար կկազմեն այս հիմնական ծախսերը, վորոնք 1927-28 տարում գեռես մի ոսուբլու նոր արտադրանք սննդամ չեն տա, հաշվել նոր պաշարներ պատրաստելու ծախսերը, պաշարներ, վորոնք քանի գեռես մնացել են անգոր-

ծածելի, ամենեին չեն ավելացնում շուկայում շրջանառության մեջ գտնվող ապրանքների քանակը և այդ պատճառով ավյալ ժամանակի համար մեռած են համարվում: Հաշվարկումը շատ մեծ թիվ տվեց—մեկ միլիարդ ռուբլուց ավելի: Իմ բերած այս բոլոր թվերը մինիմալ են և բացարձակապես անհրաժեշտ են նոր կացության հետևանքով ծագած խնդիրների իրազործման համար:

Հնարավորություն ունենք արդյոք մենք այդպիսի գումարներ զատելու, հատկացնելու թե վոչ: Կենտկոմի պլենումի բանաձեռում բերված են ընթացիկ տարիքա հիմնական տնտեսական ամփոփումները: Այդ ամփոփումները, ճիշտ ե, պայմանական են, վորովհետև նրանք հաշված են 8 թե 9 ամսվա ընթացքում: Սակայն արդեն իսկ այդ ամփոփումների և այն բանի հիմնա վրա, վոր այս տարի բերքը միջակ կլինի, ինձ թվում ե, վոր մենք կկարողանանք այդ խնդիրն իրազործել:

ՏՆՏԵՍՍԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԱՌԱՋԻԿԱՅ ՀԵՌԱՆԿԱԲՈՒԲՔԻ

Այս տարիքա բերքը մի քիչ պակաս կլինի նախընթաց տարիքա բերքից, բայց, համենայն դեպս, միջակից վոչ պակաս:

Հացահատիկների բերքը 2-3 տոկոսով պակաս կլինի անցյալ տարիքա համեմատությամբ: Հատուկ կուրատը բամբակի և մյուսների—բերքը 15-20 տոկոս աճում են ցույց տալիս: Անսանարութությունը նույնպես հավելվում է տալիս 7-8 տոկոսով: Ինչ վերաբերում է արդյունաբերության ծավալման հետա-

նկարներին, հնարավոր և հարկավոր և ապահովել, գորպեսզի ամբողջ ինդուստրիայում (ծանր և թեթև) արտադրանքը, միջին հաշվով, աճի 17 տոկոսով: Ամբողջ ապրանքային մասսան դրա հետ հաշված է զյուզատնաթեսական ապրանքները, այս տարիքա ընթացքում կավելանան 10-12 տոկոսով:

Առաջիկա տարում խոչոր դժվարություններ կծագեն բյուջեյի հարցում: Այն ժամանակ, յերբ բյուջեն 10-11 տոկոսով աճում է, մենք անհրաժեշտորեն ստիպված ենք զգալի չափով ավելացնել տնտեսական նպատակների համար հատկացվող գումարները: Ինչպես գիտեք, ընթացքի տարում հիմնական ծախսերը մեկ միլիարդ ռուբլուց ավելի կլինեն: Վորպեսզի ինգուստարացման համար մեր վերցրած տեմպը պահենք, չիմնական շինարարության ծախսերը պետք է ավելացվեն և կավելացվեն մուավորապես 100-150 միլիոն ռուբլով: Կավելանան նաև ԽՍՀՄ պաշտպանության ծախսերը:

Առաջիկա տարում մեծ ուշադրություն պետք է դարձվի տրանսպորտին: Մինչև այժմ յերկաթուղային տրանսպորտը, ընդհանուր առմամբ, հաջողությամբ բավարարում եք ժողովրդական տնտեսության կողմից նրան առաջադրված պահանջները, սակայն ժիաժամանակակից բարի այս տարիների ընթացքում կամաց կամաց ժամկետ է տրանսպորտի հիմնական կապիտալը: Դրա հետևանքով սպառնալիք է առաջանում թե՛յերկաթուղային տրանսպորտը կարող է ամենաթույլ տեղը հանգիստանալ, վորը յետ կպահի յերկրի ամբողջ տնտեսության դարպագումը: Ներկա տարում, հետապոտեղագիշտան ժամանակաշրջանից հետո, առաջին

անգամը գաղարեց տրանսպորտի սարքավորման, նրա հիմնական կազիտալի մաշվելու պլոցեսը, և առաջին քայլն արված և տրանսպորտի վերասարքավորման համար: Բացի գրանից՝ ընթացիկ տարում այնպիսի մի նոր շնչարաբություն է ակսված, վորպիսին Սեմի-րեչինուկի յերկաթուղու կառուցումն է: Վորպիսզի տրանսպորտն ընդհանուր անտեսական զարգացումից յիշ չմնայ, անհրաժեշտ է ավելացնել հիմնական աշխատանքների և յերկաթուղային տնտեսության առար-րիզում կատարվող վերանորոգման ժամաները: Ուստի առաջիկա տարվա բյուջեի համաձայն տրանսպորտի համար 200-250 միլիոն ռուբլի պետք է ձարել:

ԿՐԻՎ ԱՆՍՐԴՅԱՅԻՆԱՎԵՑ ԾԱԽՍԵՐԻ ԿՐՃԱՏՄԱՆ ՀԱՄԱՐ

Նախնական հաշիվներ, վոր ներկայումս կարելի յի անել, ցույց են տալիս, վոր տնտեսական աշխատանքի այլ թափը կարելի յի ալվահովել միայն այն գեղքում, յերբ մենք ուժեղ բեկում կատարենք անարդյունավետ ծախսերի դեմ մղվող կովում, ծախսեր, վորոնք արվում են մեր պետության և տնտեսության շափազանց ծանր, չափազանց բյուրոկրատական վարչական ապարատների պահպանման: Մինչև այժմ այդ հարցի առթիվ մենք ճեղ հետ շատ ենք խոսել, ժողով-ներում հայնոյել ենք բյուրոկրատիզմի ու վերապիր ծախսերը: Այս տարի մենք առաջին անգամ բանվորա-գյուղացիական տեսչությունից այլ հարցի վերաբեր-մամբ այնպիսի յեղակացություններ ստացանք, վո-րոնք մեր ձեռքը վորոշ լծակ են տալիս, վորպեսզի բյուրոկրատիզմի և վերաբերի ծախսերի դեմ մղվազ

կոիվը տեղից առաջ շարժենք: Առաջին անգամը արն-աեսության և խորհրդային աշխատանքի մի քանի աս-պարեզներում իսկական զործնական վերլուծություն է կատարվել այն մասին, թե ի՞նչ պատճառով այդ ա-նարգյունավետ ծախսերը մեծ են և թե ի՞նչ պետք է անել նրանց քանակը վճռականապես կրճատելու հա-մար: Ամենազիստվորը և յական բանը, վոր վերջին ժամանակ բանվորացյուղացիական տեսչությունն ա-րել է, այդ այն հաջողություններն են, վոր նա ձեռք ե բերել չափազանց ուղղաց մեր հաշվետվությունը կրճատելու և կարգի բերելու համար մղվող կովում, վորը տարեկան մոտ 700 միլիոն ռուբլի յի նստում:

Մի շարք ժողովաներ, հիմնարկներ ու տնտե-սական որպաններ մասնակից դարձնելով այլ գործին, ԲԳՏ-ի ուշի ուշով մշակեց հաշվետվության, նրա պարզացման և կրճատման, վարչական գործի ընդհա-նուր կանոնավորման և վարչական ապարատները պա-հելու ծախսերի կրճատման հարցը: Թե ԲԳՏ աշխա-տանքը ներկայումս ինչ արդյունքներ ե ավել մեզ, կարելի յի գաղափար կազմել հետևյալ որինակներից, վորը վերցրված են վերջերս կատարած մեր ապարա-տների կրճատման պրակտիկայից, կրճատումներ, վո-րին համաձայնել են և շահագրգումած որպանները:

Հաղորդակցության ձանապարհների ժողովաների ապարատներում կատարվել 40 տոկոսով, Ձինժողովանում—37 տոկոսով, Առեւտի ժողովա-նում—23 տոկ., Լուժողովանում—24 տոկ.: Հե-տապոտություն է կատարվել առանձին յերկաթուղինե-րի հաշվետվության վերաբերմամբ:

Ինձ փաստաթղթեր ցույց տվին, վորոնց մակին

ստորագրել են և՝ ԲԳՏ-ը, և՝ շահագրգոված օրդունները։ Բայց փաստաթղթերի, կրծատումներ են կամարգել Մ.-Կուրսկի յերկաթուղում—38 տոկոսով, Յեկատերինյան յերկաթ—43 տոկ., Մ.-Կազանի յերկաթ—52 տոկ.։ Այն դեպքերում, յերբ հաշվետվությունը կրծատելու փորձեր են արգել, բանից դուրս է յեկել, վոր հնարավոր է յեղել կրծատում կամարել 40—50, և մինչև իսկ 70 տոկոսով։

Մենք մի խումբ աշխատավորներ եյինք ուղարկել արտասահման, վարպետի այնտեղ նրանք նայեն և ուսումնասիրեն, թե բուրժուական յերկրներում փորո՞նք են «իսկական բուրժուական խեղաթյուրումները»։

Տրանսպորտի կազմակերպությունը և տրանսպորտում կիրառվող հաշվետվությունն ուսումնասիրելուց հետո, արտասահմանից վերադարձած ընկերները պատմում են, որինակ այսպիսի մի փաստ, վար մինչդեռ մեզնում յերկաթուղուն բեռներ հանձնելիս և ստորագիր կազմվում է 25 փաստաթուղթ, այնպիսի բուրժուական յերկրում, ինչպիսին Գերմանիան և, կազմվում է ընդունը 3 փաստաթուղթ։ (Ծիծաղ)։

Վարչական ապարատները պահելու ծախուրի կրծատման աշխատելու ամենաայն յեռանդով շարունակել։

Կենտկոմի և ԿՎՀ-ի միացյալ պլենումում ընկ. Արջոնիկիձեն այսպիսի մի գեղեց պատճեց։ Իրկուտսկի շրջանի փոխոգկոմները գյուղացիներից հավաքել են 11 հազար ոռոբլի անդամավճար. գյուղացիներին նըսպաս են ավել 6,500 ոռոբլի, իսկ իրենց ապարատները պահելու համար ծախուր են 38 հազար ոռոբլի։ (Ծիծաղ)։

Այս բոլոր որինակները յես բերում եմ, վորպես-դի ցույց տամ, թե անարդյունավետ ծախուրի կըր-ճատման ասպարիզում մենք կարող ենք և պետք է մեծ արդյունքներ ձեռք բերենք։ Մի քանի տնաեսա-կան որդանների, ժողովմատների և յերկաթուղիների վերաբերմամբ ԲԳՏ կողմից կատարված փորձը ցույց է տալիս, վոր 1927—28 տ. ընթացքում վարչական ծախսերը մենք կարող ենք կրծատել 20 տոկոսով։ Խարկե, գրա դեմ կրողոքեն, վորովհետեւ յուրա-քանչյուր բյուրոկրատական ապարատ իր բյուրոկրա-տական տրամաբանությունն ունի, վորն ազդում է և մեր կոմունիստ ընկերների վրա։ Այդ աշխատանքի հետեւանքով կավելանա գործազուրկ խորհրդային աշ-խատավորների թիվը, գործազուրկների վիճակագրու-թյունը կածի, գրա համար սպողիցիան մեզ կհայցուի։ բայց և այնպես այդ միջոցին պետք է դիմել։ Վար-չական շտանիների և վերադիր ծախսերի կրծատումը մենք կիրագործենք ինչպես ել վոր լինի, վորովհետեւ այդ մեզ ավելի հնարավորություններ կատարական ծախսեր անելու և տնտեսության զարգա-ցումն առաջ տանելու։

Այժմ ԲԳՏ աշխատանքով դործնականապես, պը-րակիկայում ապացուցված է, վոր մենք այդ կարող ենք անել և պարտավոր ենք անել։

ՊԵՏՔ Ե ԵԺԱՆԱՑՆԵԼ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ

Կենտկոմի և ԿՎՀ-ի պլենումում հսկայական ու-շագրություն կենտրոնացվեց հիմնական շինարարու-թյան և ընդհանրապես շինարարության հարցերի

վրա։ Ինչպես բանաձեկց դուք դիտեք, կուսակցության կենտրոնական կամբան դիրեկտիվ տվեց, վորովեսպի առաջիկա տնտեսական տարում շինարարական ինդեքսն իջեցվի 15 տոկոսով։ Շինարարական ինդեքսն ամենաբարձրն է, նա 2,5-ից ավելի յէ, այսինքն շինարարությունը համարյա մեզ 3 անգամից ավելի թանկ է նստում, քան պատերազմից առաջ։ Այդ գրալիորեն ավելի յէ ընդհանուր միջին թանկությունից։ Վորովչետե վերջին տարիներում շինարարությունը հսկայական թափ և ստացել, այդ պատճառով զերագարները, չնորհիվ բարձր շինարարական գների, բացառիկ չափերի յեն հասնում։ Շինարարության թանկությունը խոշորագույն արգելք և հանդիսանում յիրկը ինդուստրալացման տեմպի զարգացմանը, բընակարանային հարցի լուծմանը, նոր գործարանների պատրաստած ապրանքների եժանացմանը և այլն։ Այնինչ, որինակ՝ կրի, ավաղի, կավի, աղլուսի գները 3 անգամ թանկանալու համար վորեե խելացի հիմք զանել վոչ չի կարող։ Յեկ իսկապես ել վոր խելացի հիմք, ըստ եյության, գոյություն չունի։ Այդ պատճառով կենտրոնի պլենումը պարտադիր դիրեկտիվ տվեց շինարարական ինդեքսն առաջիկա տարում 15 տոկոսով իջեցնելու համար։

ՀԱՅԱՄԹԵՐՈՒՄՆԵՐԻ ՈՒ ԳՆԵՐԻ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹԵԱԾԱԽԵՆ

Բացի վերեւում արգեն հիշված հարցերից, յև մի քանի խոսք եմ ուզում տաել հացամթերումների և արտաքին ապրանքաշրջանառության մասին։ Ընթացիկ տարվա հացի կամպանիայի բնորոշ կողմն այն և,

վոր հացի հայթայթման գների տակարիզում կայունություն և ձեռք բերվել։ Այդ վոչ միայն տնտեսական, այլև քաղաքական մեծ նշանակություն ունի։ Աշնան և գարնան գների տարբերությունը ձեռնառ յէ գյուղացիության բարեկեցիկ վերնախավերին, վորոնք սովորաբար հացը պահում են մինչև վոր դարնանը գները բարձրանան։

Այս տարի մեզ առաջին անգամ հաջողվեց հացի մթերման կայուն գներն ամբողջ տարվա ընթացքում պահել։ Այդ գներն առաջիկա հացամթերման կամպանիայի ընթացքում ևս պետք է ընդհանուր առմամբ ու ամբողջությամբ մնան ընթացիկ տարվա մակարդակի վրա, վորպեսզի հացերի գների սիստեմում այնպիսի փոփոխություններ կատարվեն, վոր ավելի մեծ համաշափություն առաջ բերեն առանձին չրջանների հացի և տարբեր կուլտուրաների գների միջի։ Այդ հագանորեն կազմանջի, վորպեսզի ծախսերը մոտավորապես 2 տոկոսով ավելացվի հացամթերման միջին գնի համեմատությամբ, սակայն այդ ծախսերը կարելի յէ հողետք և կատարել հացի տուրում վերադիր ծախսերը կրճատելու հաշվին, միաժամանակ հացի վառառման գներն իջեցնելով։

Ինչ վերաբերում է հացամթերումների ծրագրին, չնայած ընթացիկ տարում բերքը 100-150 միլիոնով պակաս և անցյալ տարվա համեմատությամբ, բայց այդ ծրագիրը նախադաշտ է ավարտված հացամթերման կամպանիայի համեմատությամբ քիչ հավելումով։ Յենթագրվում է հացահատիկներ մթերել 700 միլիոն փութ հանդեպ 670 միլիոն փթի և յուղանու կուլտուրաները՝ 75 միլիոն փութ հանդեպ 50 միլիոն

փթի: Այդ ծրագրով նախատեսվում է 50 միլիոն փուլի
Հացի պահեստի ֆոնդ կազմել: Հացամթերումների
ծրագիրն այդ չափով մեծացնելը նրանով և բացա-
տրվում, վոր գյուղացիության մոտ զգալի քանակու-
թյամբ հացի պաշարներ են կուտակվել վերջին տարի-
ների բերքից: Այդ պատճառով գյուղացիությունն
այս տարվա բերքից ավելի մեծ չափով հաց կվաճառի:

Հացամթերման կամպանիայի կիրառման հաջո-
ղությունը և բանվորների ու գյուղացիների դաշինքի
ամրացումը մեծ չափով կախված է այն բանից, թե
վո՞ր աստիճան մեզ կհաջողվի ամրացնել ու զար-
գացնել այն նվաճումները, վոր ներկայումս մենք
ձեռք ենք բերել արդյունաբերական ապրանքների գը-
ների իջեցման ասպարիգում: Շնորհիվ այն բանի,
վոր գործարանային ապրանքների գները 1927 թ.
հունվարի 1-ի համեմատությամբ համարյա 10 տո-
կոսով իջեցվել են, մենք վորոշ չափով «մկրատի» բե-
րանները միմյանց մօտեցրել ենք, բայց գեուեօ վոչ
բավարար չափով:

Ուստի պլենաւմն իր բանաձեռում ամենայն ուժով
ընդդեմ, վորպես մատակա ժամանակի կարևորագույն
դիրեկտիվներից մեկը, վոր պետք ե կորիվ մղել ար-
դյունաբերական ապրանքների գներն ել ավելի իջե-
ցնելու համար և այդ հիմունքի վրա ամրագնդել քա-
զաքի ու գյուղի տնտեսական մերձեցումը:

ԱՐՏԱՔԻՆ ԱՌԵՎՑՈՒԻՐԻ

Ինչպես յես արդեն ասացի, անդլո-խորհրդային
Հարաբերությունների իզման հետևանքով ամենամեծ
դժվարությունները ծառանում են արտաքին առևտուրի

առջև, վորի հետ սերտորեն կապված են յերկրի ին-
գուստարալացումը և արդյունաբերության այնպիսի
ձյուղերի ծավալման թափը, ինչպիսին մահածային:
բրդի արդյունագործությունն ե, վոր մեծ մասամբ
ներմուծվող հում նյութերով են գործ տեսնում: Ներ-
մուծման ծրագիրը կրծատել կնշանակեր կրծատել
նոր գործարանների կառուցումը և վորոշ չափով ել
բանող գործարանների աշխատանքը: Անդլո-խորհրդ-
դային հարաբերությունների խզումից առաջ մեր ծրա-
դիրը կազմելիս մենք յենում եյինք այն տհասակետից,
թե հնարավոր ե, վոր մեր արտածման—ներմուծման
գործարքները խոշոր չափով ծավալվեն: Այժմ այդ
հնարավորությունը մի քիչ նվազել ե և ըստ մեր առա-
ջիկա նախադի, արտածման—ներմուծման ծրագիրը
միայն փոքր չափով և մեծանում ընթացիկ տարվա
համեմատությամբ: Սակայն այդ ծրագիրն ել Առևտորի
Փողկոմատից պահանջում ե, վորպեսզի նա մեծ ճկու-
նություն ցույց տա և մի շարք միջոցներ ձեռք առնի
արտածումն ուժեղացնելու պրեմիաների միջոցով,
արտաքին առևտորի գործի մեջ քաշել տեղական որ-
դաններին, այդ բանում ավելի ևս չահագրգուել նրանց
և այլն:

Թույլ ավելք, ընկերներ՝, սրանով վերջացնել իմ
գեկուցման առաջնորդ մասը և անցնել սպողիցիալի
հարցին:

ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԸ ՀՐԱՎԻՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ուղղեցիայի հարցը չոշափելուց առաջ, յես մի
բանի խոսք պետք ե առեմ պլենումի որակարդի Յ-րդ

կեսի՝ կուսակցության համագումար հրավիրելու մասին։ Այդ հարցը մենք լուծել ենք, նախքան սպազիցիայի վերաբերյալ բանաձեկ բնորոշվելը և նրա հայտաբառության հարցը քվեարկվելը։ Ուղղվածիան իր որակարգն առաջարկեց։ Ուղղվածիան առաջարկում էր, մոտակա համագումարի որակարգի մեջ մտցնել, առաջին՝ անցած տասնամյակի մեր գործունելության արգյունքների հարցը, յերկրորդ՝ միասնականության վերաբերյալ հատուկ կետ, յերրորդ՝ միջազգային հեղափոխության հեռանկարների վերաբերյալ կետ։ Մենք յետ վանեցինք սպազիայի այդ բոլոր առաջարկությունները, վարովհետեւ մեր ընդունած որակարգով, այդ բոլոր հարցերը սպառվում են և բացի այդ գյուղի աշխատանքների վերաբերյալ հատուկ հարց և մոցված։ Կուսակցության կե-ի հաշվետվությամբ, վոր մեր սպատակամագորության կողմից պետք են ներկայացվի Կոմինտերնի Գործկոմին, պետք են կատարելազես սպառվեն մեր ներքին և արտաքին քաղաքականության բոլոր գլխավոր հարցերը։

Իսկ համագումարը տասնամյակին նվիրված հոգելյանական մի նխատի վերածելը՝ մենք նախատական հարմար չելինք համարում։ Կուսացության միասնականության հարցը մենք յետ վանեցինք այն սպառագում և կե-ի հաշվետվությամբ, և յերկրորդ նրա իրական լուծումը ներկայումս վորոշվում են քաղաքական գծի միասնականությամբ և սպազիայի պառակտիչ քաղաքականության գաղաքումով։ Նմանապես յետ վանեցինք սպազիայի այն առաջարկը, թե ժամկետ նշանակվի համագումարից առաջ տեղի տնենալիք գիտկուսիայի

Համար։ Կուսակցության 10-րդ համագումարի վորոշմամբ և մեր կանոնադրության համաձայն, համագումարի ուղակարգը պետք է հրատարակի վո՛չ ուշ, քան համագումարից մեկ և կետ ամիս առաջ, իսկ գեկուցումների թեզերը՝ վո՛չ ուշ, քան համագումարից մի ամիս առաջ։ Ուղղվածիան մեկ պահանջներկայացրեց, վոր գիտկուսիան համագումարից շատ առաջ հայտնաբարվի։

Այդ առաջարկությունը մենք յետ վանեցինք այն պատճառիվ, վոր նպատակահարմար չենք համարում ամիսներ շարունակ կուսակցությունը գիտկուսիան անողի մեջ գցել, զբաղեցնելով, որինակ, այնպիսի հարցով, թե մեր կուսակցության մեջ, մեր յերկրում, կարելի՞ յեւ արդյոք թույլատրելի համարել կլիմանսոյի մեթոդները՝ պատերազմի վանողի պայմաններում։ Դա միանգամայն անթույլատրելի, աններելի շոայլություն կլիմաներ։ Ուստի մենք նահմանափակիվեցինք միայն վորոշում կայացնելով, թե համագումար հրավիրելու հարցում պետք է առաջնորդվել 10-րդ համագումարի վորոշումներով և կուսակցության կանոնադրությամբ։ Ուղղվածիան իրավունք ունի իր հակաթեզերը ներկայացնելու։ Մենք պարտավոր ենք տպագրել այդ թեզերը, հրապարակել գիտկուսիան թերթիկ և կատարել այն ամենը, ինչ վոր պահանջում են կանոնադրությունն ու կուսակցության վորոշումները։ Ավելի վոր կամենում են լեզար սահմաններում, առանց գաղտնի կազմությունների, քննարկել կուսակցության բոնածդիքը, նրանց մենք կատարյալ և անպայման հնարինություն կտանք այդ ամենը։ Համագումարի հայտնաբարման վերաբերյալ կուսակցության վո՛չ մի

Վորոշում չի խախտվի: Սակայն մենք թույլ չենք տա, վօր—ինչպես ոպողիցիան ե ցանկանում—կուսակցությունը յերեք ամիս շարունակ՝ մինչև համագումարը, դիսկուսիոն աենդով բոնվի: Միջազգային ներկա կացության պայմաններում դա առանձնապես անթույլարելի յէ:

ՈՊՈԶԻՑԻԱՅԻ ՀԱՐՑԸ

Ինչպես մատնանշել եմ արդեն իմ զեկուցման սկզբին, ոպողիցիայի հարցը պետք ե քննարկվեր որպես կարգի չորսորդ կետում: Իրոք այդ հարցը քննարկվեց պլենումի աշխատանքների ամբողջ ընթացքում (քաղականչություն՝ «12 որ»): Այս՝ ծոտավորապես այդքան: Այդ ժամանակամիջոցում ոպողիցիան ձգտում եր կրկին պլենումի քնն, թյան առաջադրել մեր քաղաքաց կանության բոլոր սկզբունքային հարցերը, վորոնց թշվում նաև ԽՍՀՄ-ում սոցիալիզմ կառուցելու հարցը: Եթե դեռ պլենումում ասել եմ կե-ի անդամ իմ ընկերներին, թե յես ինչս անձամբ, այդ հարցի շուրջը, չպիտի հանդես դամ՝ վթ'չ պլենումում, վո'չ թիջներում, վո'չ ել մի վորևե այլ տեղ, քանի վոր դա բոլոր բնիջներում ել քննարկվել ե և դրա մասին վորոշում ե ընդունված 14-րդ համագումարում, վորը և սպասարկում ե ամբողջ կուսակցության կողմից: Դեռ ավելին, յես ասացի, թե յերկյուղ եմ կրում, վոր շուտավ բնիջներից կվտարեն այն բոլոր անձանց, վորոնց խելքին փչի նորից բարձրացնելու այնտեղ այդ հարցը: (Քացականչություններ՝ «Բիշտ ե») (ծափահարություններ):

ՈՊՈԶԻՑԻԱՅԻ ՀԱՐՑՆ ՈՐԱԿԱՐԳԻ ՄԵՋ ՄՏՑՎԵԼՈՒ ՊԱՏՃԱՌԻ

Էնկ. ընկ. Տրացկու և Զինովյեվի հարցը միացյալ ողենումի որակարգի մեջ մտցվելու ձեզական պատճառը ըսլորին ել հայտնի յէ: Կվ.Հ-ի պրեզիդիումը միացյալ ողենումին առաջարկեց, վոր վերջինս ընկ. ընկ. Տրոցկուն և Զինովյեվին կե-ի կազմից հանելու հարցը դնի այն պատճառով, վոր ընկ. Զինովյեվը, «մամուլի տոնեից ժամանակ, հանդես գտլով անկուսակցական մի ժողովում, քննարկատության եր յենթարկել կուսակցության կենարունական որգան «Պրավդան» ու կե-ը և ոպողիցիան քաղաքական բացարձակ ցույց եր կազմակերպել Յարուավլի կայարանում: Այս և հարցի ձեռքական կոզմը: Իսկ հարցի եյությունն այն է, վոր 14-րդ ժամանակումարից սկսած, մեր քաղաքականության մի շարք հիմնական հարցերի չուրջը կուսակցության և ոպողիցիայի միջն տիրող տարածայնություններն ավելի ու ավելի ելին խորանում:

Ներկայումս արդեն կուսակցության և ոպողիցիայի միջն այնպիսի մի «իդեոլոգիական մկրամ» և գոյացել, վոր ոպողիցիայի պառակտիչ գործունեյության պատճառով Կվ.Հ-ը հարկադրված եր միացյալ ողենումին առաջարկություն անել՝ ընկ. ընկ. Տրոցկուն և Զինովյեվին կե-ի կազմից հանելու:

ՈՊՈԶԻՑԻԱՅԻ ՅԵԼՈՒԹՅՈՒՆԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆՆ ՍԿՍԱԾ 14-ՐԴ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻ ՈՐԵԲԻՑ

Թույլ տվեք, վոր նախքան պլենումում կատարվածների մասին պատմելը՝ հոգտուող ժամանակագրա-

կան աեղեկանք բամ ոպոզիցիսն այն յելույթների մասին, վորոնք տեղի յեն ունեցել նոր միացյալ ոպոզիցիայի գոյության ընթացքում : Ինչպես ձեզ հայտնի յէ, նոր ոպոզիցիան՝ ընկ . ընկ . Զինովյեվի և Կամենեվի դիմավորությամբ ձեղակերպվեց կուսակցության 14-րդ համագումարում : Համագումարը (1925 թ . դեկտեմբերին) կերպության առթիվ իր ընդունած բանաձեվի մեջ հարկադրված եր մատնանշել, թե սկզբունքուն սխալ և նոր ոպոզիցիայի տեսակետը գյուղացիության հանդեպ մեր բոնելիք գիրքի մասին, կոռպերացիայի կատարելիք գերի, մեր յերկում առցիալիքմ կառուցելու հնարավորության և մեր ոկետական արդյունաբերության բնույթի մասին, — տեսակետներ, վորոնք շեղվում են լենինյան թեորիայից և մեր կուսակցության պրակտիկայից :

Համագումարն ընդունեց, վոր ոպոզիցիայի հայցքներն «անհնարին դարձնելով մասսաների գիտակցական վերաբերմունքը դեպի ընդհանրապես սոցիալիստական արդյունաբերության շինարարությունը, ընդունակ են լոկ հապաղեցնել տնտեսության սոցիալիստական տարրերի աճումը և դյուրացնել մասնավոր կապիտալի պայքարը նրանց դեմ : Ուստի համագումարն անհրաժեշտ է համարում, վոր զատիքարակչական լայն աշխատանք կատարվի լենինիքմի այդ խեղաթյուրումները հաղթահարելու համար» (կերպության առթիվ ընդունված բանաձեվը . 14-րդ համագումարի ողագիր հաշվետվությունը, էջ 960) :

14-րդ համագումարին հաջորդող ժամանակամիջոցում ոպոզիցիան անբնդհատ հարձակումներ եր դար-

ծում կուսակցության կենալունական Կոմիտեյի վրա, ոպտագործելով այդ նովառակի համար բոլոր այն դժվարությունները, վորոնց հանդիպում և ԽՍՀՄ-ի բանվոր դասակարգը՝ սոցիալիզմի համար իր մղած պայքարի ընթացքում . նա կրկին ու կրկին աշխատում եր հրապարակական դեկանության վաթաթել կուսակցության վզին : Շուտով, Փրակցիոն աշխատանքն առաջ է տարիվում լայն ծակատով և ոպոզիցիան ձեռնամուխ և լինում մի այլ գործի սկսում և ոպոզիցիոն ընդհատակյա կազմակերպություններ ստեղծել : Այդ ժամանակներն ե, վոր նոր ոպոզիցիան՝ ընկ . ընկ . Զինովյեվի և Կամենեվի դեկավարությամբ, հարում և ընկ . Տրոցկուն : Ընկ . Զինովյեվը հանդիսավոր կերպով հայտարարում ե, վոր նա տրոցկիզմի մասին իր տված նախկին վողջ զնահատականը և ընկ . Տրոցկու դեմ իր մղած պայքարը ներկայումս սխալ է համարում և ուրախությամբ, այսպիս ասած, յետ կը վերցներ : Այդպիսով մեր դեմ հանդիման ծառացափ ոպոզիցիոն յերկու դեպ հանդիման միացման վաստն ինչպես հայտարարեց ընկեր Կամենեվը պլենումում — «մի հոսանք դառնալու» ժամատը : Կուսակցության մեջ իր գիրքը ձեղակերպելու նպատակով ոպոզիցիան պայքար ոկանց իր Փրակցիան լեզարացնելու համար :

Բնորոշ ե այն հանգամանքը, վոր նրանց համերաշխ յելույթներից առաջինն այն յելույթն եր, վոր նրանք գործեցին՝ Ռոստվակուն կուսակցությունից հանելու քննելիս : Ռոստվակուն կուսակցությունից վատրացը քննելիս : Ռոստվակուն կուսակցությունից վատրացը այն պատճառով, վոր նա անհրաժեշտ էր համարութույլ տալ, ներկայումս, պրոլետարիատի դիկտատուրայի որոք, կազմակերպել յերկրորդ մի կուսակցությունը առաջ գործություն ունենալու համար :

Թյուն: Նրա թեորիան այն էր, թե մեր կուսակցությունը վերասերվել է, մանր բուրժուական և գտուել, թե նրան պետք է մաքրել բուրժուական ազդեցություններից՝ լեզարացնելով քաղաքական մի կուսակցություն ևս: Այդ բանի համար Ասսովսկին դուրս ե արդաշ կուսակցությունից: Ընկ. Տրոցկին և ուրիշները զայքարում ելին Ասսովսկուն ի նպաստ և նրա վտարմանը դեմ քվեարկեցին:

«Եսը սպողիցիան» արսցկիզմի պլատֆորմին անցնելուց հետո, 1926 թ. աշնանը, սպողիցիայի կազմից նոր արշավանք և սկսվում կուսակցության դեմ: այդ «արշավանքի» համար առաջարեց են հանդիսանում Լենինգրադի և Մոսկվայի համարյա բոլոր բջիջները: Առաջիցիոն լիգերներն աշխատում ելին մասսաներին նվաճել մեր կուսակցության ստորին բջիջներում յեւլույթներ սարքելով: Մոսկվացիք գրանց մասին հիշում են, որինակ՝ «Ավելոպրիբորում» նրանց սարքած յելույթից, իսկ լենինգրադցիք՝ «Կրասնիյ Պուտիլովեց»—ում և այլ գործարաններում սարքած յելույթներչց: Սակայն նրանք՝ ի մեծ զարմանս իրենց, միանգամայն բացառիկ մի պարագություն կրեցին: Ոպոզիցիոն լիգերները գրանով համոզվեցին, թե վորչափ սերասրեն են կապված յեղել իրենք մասսաների հետ, թե վորքան կարգել են իրենք կուսակցությունից: Կուսակցության դկը հույս ուներ, վոր ոպոզիցիան, այդ դաժանագույն ուղարառությունից հետո, կըմբռնի իր սիալները և համապատասխան յեզրակացություններ կհանի դրանից: Առաջին մոմենտին դա շատ հնարավոր էր թվում:

ՀԱԿՏԵՄՔԵՐԻ 16-Ի ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ինչպես գիտեք, կուսակցության դեմ ոպոզիցիայի մզած պայքարի առաջին շրջանը բոլորվեց հոկտեմբերի 16-ի փաստաթղթով: Քանի վոր ներկայումս ոպոզիցիայից ստացված նժանորինակ մի նոր փաստաթուղթ ևս կա մեր ձեռքում, ապա ոգտակար կլինի կուսակցության անդամների հիշողության մեջ վերականգնել հոկտեմբերի 16-ի փաստաթղթի գելթ եյական մոմենտները:

Այն ժամանակ ոպոզիցիան հիշյալ փաստաթղթի մեջ Փրակցիաների հարցի առթիվ, հայտարարում էր. «Մենք վճռականորեն վանում ենք Փրակցիաների, խըժրավորումների ազատության թեորիան ու պրակտիկան հակասում են լինինիզմի հիմունքներին և կուսակցության վրոշումներին՝ թե Փրակցիոնականությունն անթույլատրելի յէ: Մենք մեր պարտականությունն ենք համարում մեր այս աեսակետը կիրառել պորձնականում (դա 1926 թ. աշնանն էր. Ա. Ռ.): մենք հայտարարում ենք, վոր վճռականորեն հրաժարվում ենք մեր հայացքները Փրակցիոն մեթոդներով պաշտպանելուց, քանի վոր այդ մեթոդները վտանգավոր են կուսակցության միասնականության համար: Կոչ ենք անում մեր հայացքներին հարող մեր բոլոր ընկերներին, վոր նրանք ել նույնը կատարեն: Կոչ ենք անում անհապաղ ցրել Փրակցիոն այն բոլոր իմբավորումները, վորոնք կազմվել են ոպոզիցիայի հայացքների շուրջը»:

Իրականում մեր առջեվ կատարվածի հետ համագրելու համար անհրաժեշտ ե վերհիշել մի այլ մոմենտ— ոպոզիցիայի հայտարարությունն ույլաբառախիերի և

կուսակցությունից վտարվածների մասին։ Հոկտեմբերի 16-ի փաստաթղթի մէջ ասված է. «Մենք վճռաբար դատապարտում ենք Կոմինտերնի կամ մեր կուսակցության դեմ ուղղված այնպիսի քննադատություն, վորր հետապնդումի բնույթ և ստանում, վորր թուլացնում և Կոմինտերնը՝ իրրել համաշխարհային պրոլետարիատի մարտական մի կազմակերպություն, թուլացնում և Համ։ Կկ (բ.)՝ վորպես Կոմինտերնի առաջապահ մի ջոկատ, և կամ ԽՍՀՄ՝ վորպես պրոլետարական դիկտատուրայի մի պետություն։ Մենք միանգամայն անթույլատրելի յենք համարում ուղղակի կամ անուղղակի կերպով պաշտպանել Կոմինտերնի վորե խմբակի կամ սեկցիայի Փրակցիոնականությունն ընդունեմ Կոմինտերնի ընդունած գծի, լինի դա Սուվարինի խանած գիծը Ֆըրանօիայում, Մասլովինը, Ֆիչերինը, Աւրանսինը, Լեղերինը Գերմանիայում, Բորգիգիի ուղղությունն իտուլիայում։

Մենք միանգամայն անթույլատրելի յենք համարում պաշտպանել առհանարակ վորե խմբակի բանած գիծը, անկախ նրանից՝ թե ի՞նչ վերաբերմունք և ցույց տալիս այդ խմբակը մեր հայացքներին։ Առանձնապես անթույլատրելի յենք համարում մենք վորե աջակցություն ցույց տալ այն անձանց գործունեյության, վորոնք արդեն վտարված են կուսակցությունից և Կոմինտերնից, այն-է՝ Ռուս Ֆիչերին և Մասլովին։»

Այս գեկլարատիվ հայտարարությունները պետք են վերջ տալին ուղղիցիայի հակակուսակցական յերրություններին։ Յեկ իրոք, այդ դեկլարացիայից հետո, ուղղիցիան մի առժամանակ նահանջ տվեց և կուսակցության շարքերում չատ կարծատեվ անդորրություն

հաստատվեց։ Սակայն կարձ ժամանակից հետո, ոպողիցիան կուսակցության և Կոմինտերնի դեմ մի նոր գլուխ ավեց՝ բացառիկ ուժով։ Դրա չնորհիվ ստեղծված կացությունն ավելի վտանգավոր դարձավ, քան անցյալ տարի աշնանը՝ հոկտեմբերի 16-ի հայտարարությունից առաջ, վտանգավոր դարձավ այն տեսակետից, վոր ավելի հնարավոր դարձավ ուղղիցիայի անջատումը կուսակցությունից։

ՈՊՈԶԻՑԻՈՆ ՔՆԵԱԴԱՏԱԽԹՅԱՆ ՆԱՐ ՓՈՒԼԻ

Ոգովելով չինական հեղափոխության զարգացման մէջ առաջացած վորոշ դժվարություններից, ոպողիցիան աշխատում եր այդ դժվարությունները Կոմինտերնի Գործկոմին վերապրել և իր հարձակումն նկանց Կոմինտերնի վրա գրոհ տալով։ Միևնույն ժամանակ ել ընկ Տրոցկին Կոմինտերնի պլենումում ողտագործեց ամբոխն՝ կուսակցության Կենտրոնական Կոմիտեյի վրա հարձակում գործելու համար, հայտարարելով, թե՝ ոպողիցիայի կարծիքով, «կուսակցական ուժիմը» հիմնական վտանգ և հանդիսանում պատերազմի ոպատճերի որերին, այսինքն՝ կուսակցության ներկա զեկավարումը հաղթանակ չի յերաշխավորում մեզ։ Կվաշ-ի պրեկուբումի նիստում նա կրկնում է այն հայտարարությունը, թե «կուսակցության բոնած կուրոք գլխավոր վտանգն և հանդիսանում է նա խնդգում ին հեղափոխական գիմագրությունը և ամրացնում են աջ ուղղությունը»։ Այդպիսով ընկ Տրոցկին նորից կը լինեց Կենտրոնական Կոմիտեյի դեմ ուղղված այն ծանրագույն մեղադրանքը, թե Կկ-ի դեկադարությունը բանվոր դաստիարակության շահերի, հեղափոխակարգի չահերի,

և կ ուղիով չի ընթանում :

Այդ մեղադրանքները յելակեա ունենալով, ոպողիցիան, իր 83 անդամների ստորագրությամբ մի հայտաբարություն կազմեց և ներկայացրեց Քաղբյուրութին : Այդ հայտաբարությունից անմիջապես հետո, յուրահատուկ մի պետիցիոն կամպանիա սկսվեց՝ Միության վոզչ տերրիտորիայի վրա յեղած բոլոր բջիջներում :

Ոպողիցիան կրկին ջանաց նվաճել կռւսակցական մասսային :

Սակայն ի՞նչ արգյունքներ տվեց այդ պետիցիան կամպանիան : Ինձ թվում ե, թե պետիցիաների այդ կամպանիան ոպողիցիայի հերթական պարտությունն ե, վորովճետեվ միլիոնից ավելի անդամ ունեցող ժեր կռւսակցության մեջ, անտարակույս, պետք ե վոր լինի մի ժանի հազար հոգի՝ դժգոհ կե-ի քաղաքականությունից, պետք ե վոր վորոշ թվով այս կամ այն թերություն ունեցող տատանվողներ և թերահավատներ լինեն : Ոպողիցիան, իր յեռամսյա պետիցիոն կամպանիայի ընթացքում մոտ մեկ և կես հազար ստորագրություն հավաքեց :

Ի՞նչպիսի գնահատական պետք ե տանք մենք այդ պետիցիային : Յեթե մեկ և կես հազար ստորագրություն հավաքած այդ պետիցիան, ոպողիցիոն լիգերների պետիցիան ե, ապա այդ թիվը չատ ե, իսկ յեթե դա կռւսակցության բոլոր անդամներին ուղղված հարցաթերթ ե՝ ապա ստորագրությունների թիվը չատ քիչ է : Իրոք, ոպողիցիան, առանց վորեւ բանից խորչելու, ամեն միջացի դիմեց, վորպեսզի կարողանա մաքսիմալ թվով ստորագրություն հավաքել : Ներկայումս արդեն

մենք մի շարք հայտաբարություններ ենք ստացել, վորով այդ պետիցիան ստորագրուղները յետ են վերցնում իրենց ստորագրությունները՝ պարզապես այն պատճառով, վոր ստորագրով ընկերները սխալանքի մեջ են դցված յեղել և հաճախ չեն խմացել, թե իրոք ի՞նչ բանի տակ են ստորագրել : Այդ պայմաններում մեկ և կես Հազար ստորագրություն հավաքված լինելը ոպողիցիայի այդ կամպանիայի կատարյալ պարտությունն ե վկայում : Ոպողիցիան—չնայած կե-ի վրա դործած իր կատաղի հարձակումներին, գուցե և հենց այդ հարձակումների պատճառով—չկարողացավ գեթ քիչ թե շատ շոշափելի թվով ստորագրություն հավաքել :

Սակայն ի՞նչ ե ցույց տալիս այդ պետիցիոն կամպանիան ըստ եյության : Նա ցույց ե տալիս, վոր այդ կամպանիայի միջոցով ոպողիցիան աշխատում եր մեր կռւսակցության միջին մի խմբակ հավաքել, կազմակերպել նրան այդ պետիցիայի պլատֆորմի վրա և վօրպես կազմակերպված մի ամբողջություն, ճնշում գործ դնել կե-ի և կռւսակցության վողջ քաղաքականության վրա :

Միևնույն ժամանակ, ոպողիցիան իր բրոցյուրների և այլ նյութերի դադունի հրատարակչությունը կազմակերպեց : Դրա հետ միաժամանակ, ոպողիցիան կապեր եր հաստատում կոմինտերնից և կոմունիստական կռւսակցությունից վտարված ունեղատների այն խմբակի հետ, վորից նա ձեռք իր քաշել Հոկտեմբերի 10-ի իր հայտարարությամբ :

Այս բոլորը միասին վերցրած, ցույց են տալիս, վօր սպողիցիան վերջին պիենումից առաջ մինոր փորձեարել վո՛չ միայն իր նոր Փրակցիան ձեվակերպելու, այլև կապեր հաստատելու կոմինտերնից վտարված

տարրերի հետ։ Վորքան ել աշխատի ոպողիցիան ժըիս-
տել, նա չի կարող թագցնել այդ հանգամանքը։ Այն
ուղին, վարի վրա նրանք վոտ են զրել—յերկրորդ կու-
տակցության տաճող ուղի յէ։

Այս եւ արամարանական զարգացումն այն բոլոր
յիւղութիւնների, վոր գործել եւ ոպողիցիան վերջին ժամա-
նակներս։

ՈԳՈՉԵՑԻԱՆ ԶԿԱՏԱՐԵՅ ԻՐ ՍՏԱՆՉՆԱԾ

ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Սակայն ի՞նչպես կատարեց ոպողիցիան այն պար-
տականությունները, վորոնք հանձն եր առել նա վողջ
կուսակցության և յերկրի առջև՝ հոկտեմբերի 16-ի իր
հայտարարությամբ։ Ոպողիցիան հոկտեմբերի 16-ին
հայտարարել եր, թե նա խում եւ Խուտ Ֆիջերի, Մաս-
լովի ու նըս խմբակի հետ իր ունեցած կազմակերպչա-
կան բոլոր կապերը, իսկ 1926 թ. հոկտեմբերի վերջին,
Աւրանոն իր ժուրնալում հետեւյան և զրում բառացի։
«Մի քանի որ առաջ (1) «ոռւսական ոպողիցիա-
յից (1) մի բուտացած մի զրությունից— վորի մեջ ման-
րաժանաբար, պատկերացված են տարածայնություն-
ներն ու ոպողիցիայի տեսակետը— մեջ ենք բերում շե-
զզումները կետ առ կետ (այսինքն Կենտրոնական Կոմի-
տեյտի շեղումները պրոլետարական զծից»։ Ա. Ռ.։)

Դրան հաջորդող ժամանակի ընթացքում, նույն
ժուրնալի մեջ լույս են տեսնում ուսւոպողիցիայի կող-
մից Կոմիտերնին ներկայացված փաստաթղթերը, վո-
րոնիք նույն աղբյուրներից են ստացվել։ Լույս են տեսել,
ի մեջի այդոց, ընկ-ընկ-ըլոցկու և Վույովիչի հայտա-
րարությունը, ընկ- Տրոցկու հոդվածը՝ «Պարար խա-

զաղության համար և անգլո-ռուսական կոմիտեն» վեր-
նաբրով ։ ի վերջո բացարձակ կերպով հայտարարություն
ե ապագրվում, թե մոաիկ ապագայում պիտի հրատա-
րակին մի շարք ոպողիցիան այլ փաստաթղթեր և՝ քանի
վոր մասսաները պետք ե անպատճառ կարգան այդ փաս-
տաթղթերը, բաժանորդագինը պիտի իջեցվի։ Խմբա-
զրությունն առաջարկում ե բանվորներին, վոր վերջին-
ներս բաժանորդագրվեն այդ ժուբանին։ (Ծիծաղ)։

Դեռ շատ մոտ ժամանակները «83-ի» գոկուրենալը—
վորը վորպես զաղոնի փաստաթուղթ, ներկայացված և
յեղել կկ-ի Քաղբյուրոյին և վորն անլեզար ու կիսալե-
զալ կերպով տարածաւմ են մեզանում, պրոլետարական
պետության սահմաններում, ոպողիցիայի կողմից
ուաշտպանություն գտնող լուսով-՛՛ լուսացնոի իմբակի
հրատարակությամբ, թուոցիկ ձևով, բացե ի բաց տա-
րածում են Գերմանիայում՝ բուրժուական դիկտատու-
րայի յերկում, ոգագործելով բուրժուական պետու-
թյան մամուլի ազատությունը։

Այդպես վոտի տակ տվեց ոպողիցիան հոկտեմբերի
16-ի իր սեփական հայտարարությունը։

Մի այլ փաստ։ Ոպողիցիան հայտարարեց, թե նա
կատեգորիկ կերպով բացառում է Փրակցիտների և
խմբավարումների կաղմակերպումը։ Իսկ պետի-
ցիոն կամպանիան Փրակցիայի ոլլընավորություն
չե։ Իսկ իր գրականության անլեզար հրատա-
րակումը և տարածումը՝ զա Փրակցիոն աշ-
րակություն չե։ միթե։ Իսկ ընկ- ընկ- Զինովիյի
կամենելի արցոցիկոմի կազմն անցնելը և նրանց յեն-
թարկելը տրոցկիստական խորությային, այն վոր նը-
րանք բոլորի համար պարտադիր, են համարում իրենց

Փրակցիոն կենտրոնի վորոշումները — միթե այդ բոլորը տրացկիստուկան նոր կուսակցության կազմակերպելու ուղի չեն։ Սակայն սպողիցիայի ամենացայտուն հակակուսակցական յելույթը, վորն ապացուցում է, թե այդ նոր Փրակցիան ի՞նչպես և աշխատում պայքարել կուսակցության և նրա կենտրոնի դեմ, ի՞նչպես և վուղում կուսակցության պառակտումի ուղու վրա — իմ կարծիքով Յարուլավի կայարանում կատարված ցույցն է։

Ոպողիցիայի ներկայացուցիչներն սկզբում կատերութեակ կերպով ժխտում ենին, վոր այդ գեծոնստրացիան հակակուսակցական մի քայլ է։ Նրանք, վորպես թե, բարեկաժմական զգացմունքներից դրդված են յեկել կայտան՝ իրենց ընկ։ Սմիլգային ճանապարհ դնելու։ Սակայն՝ յերբ ընկ։ Որջոնիկիձեն կե-ի սկզբումի մեջ հարցրեց նրանց, թե՝ այդ վո՞ր ժամանակից ե, վոր ընկ։ ընկ։ Տրոցկին և Զինովյեվն սկսել են ընկ։ Սմիլգային ձեռի վրա վագոն տանել — առաջ այդպիսի բան յերբեք չի կատարվել (յերկարատև ծիծաղ), յերբ նա մերկացրեց նրանց և մատնանշեց, թե ինչպես նրանք իրենց Փրակցիոն որդաններն ոգտագործել են ընկ։ Սմիլգային ճանապարհ դցելու համար, յերբ մատնանշեց, թե սպազմիոն բարեկամին ճանապարհ դցելու գլխավոր լուղունդը կե-ի դեմ ուղղված բողոքն է յեղել, նրանք ստիպված յեղան խոստովանվել, վոր «կայարանի դեպքը» բացահայտ ցույց է յեղել կուսակցության դեմ և վոր նրանց խմբակը՝ ըստ իրենց արտահայտության՝ «Փրակցիոնականության տարրեր» ունի։

Այն ճանապարհը, վորով անցել և սպողիցիան հոկտեմբերի 16-ի հայտարարության նախորյակից մինչև

կե-ի վերջին պլենումը, կարելի յե, որինակ, այսպես պատկերացնել՝ անտառից — կայարան։ Այն ժամանակ-ները Փրակցիոնականության ամենացայտուն արտահայտությունն եր՝ «Լաշեվիչը անտառում», այժմ՝ բացահայտ քաղաքական ցույց Յարուլավի կայարանում — «Սմիլգան Զինովյեվի և Տրոցկու ուսերին»։ Սրանք են, ահավասիկ, այդ ճանապարհի հիմնական ուղղենիչները։

ՈՊՈԶԻՑԻԱՅԻ ՈՒԺԵՐԻ ԴԱՍԱՎՈՐՈՒՄԸ

Այդ համադրությունը յես նրա համար մեջ բերեցի, վոր ընդգծեմ, թե ինչ փոփոխություններ ե կրել սպողիցիայի վերաբերմունքը դեպի կուսակցությունը՝ մինչև կե-ի պլենումի որերը։ Միևնույն ժամանակ միանգամայն անվիճելի յի, վոր Զինովյեվը, Կամենեվը և ուրիշ ները նույնպես տրոցկիստներ են դառել, ինչպես և Տրոցկին ինքը։ Վերջին ժամանակներս նկատվում ե, վոր սպողիցիայի «ձախ» թերը (Սալբոնով, Սմիրնով, Վ.) ձգտում ե վորոշ չափով, վախվիսելով սահմանագծվել մյուս սպողիցիոններներից։ Սակայն պետք ե հենց սկզբից ասեմ, վոր սպողիցիան, հանձինո ընկ։ ընկ։ Տրոցկու, Զինովյեվի և Կամենեվիլից չնայած վոր սպենումին մասնակցողները համառորեն առաջարկում եյին նրանց հեռանալ «15-ի պլատֆորմից» — վո՛չ մի խոօք չարտասանեց պլենումում դրա մասին։

Ոպոզիցիոններն ուղեն թե չուզեն՝ սպողիցիան «ուժերը» հետևյալ կերպ են դասավորվում։ Կենտրոնում վորպես դիրիթյոր՝ ընկ։ Տրոցկին ե կանգնած, վորին սպնում են ընկ։ ընկ։ Զինովյեվը, Կամենեվը և ուրիշները. «ձախ» կողմը՝ Սալբոնովի՝ Սմիրնովի բուժքն ե գոտիգում, վորից սպողիցիան չի առհման-

զծվում : իսկ «աջ» կողմը՝ մի ինչ վոր քնձոստ աննկատելի և անպետք մի բուֆեր, վորի ստորագրություններ եր սպողիցիան հավաքում փաստաթղթերում, վոր բազմացնում և տարածում եր : Հարձակումներ եյին տեղում ամեն զծով անխօսիր և ամեն տեսակ սլատֆորմի վրա հիմնված՝ միայն թե հարձակում լինի կենորոնական կամիսէլի վրա :

15-ի ԽՄԲԱԿԻ ՄԱՍԻՆ

Նախքան սպողիցիայի գլխավոր կորիզին անցնելու, (Տրոցկի, Զինովյեվ) յես ուղում եմ մի քանի խոռոք առել կե-ին ներկայացված «15-ի փաստաթղթի» (Միլիոնի Սպարոնովի) մասին :

Քանի վոր սպողիցիոնները մեզ մեղադրում են, թե մենք խեղաթյուրում ենք նրանց իսկական հայցքը, յես հարկադրված եմ ի չարք գործադրել ձեր համբերությունը և մեջ բերել նրանց ձցրիս խոսքերն իրենց փաստթղթերից :

Ահավասիկ ձեզ, մի . քանի քաղվածքներ՝ «15-ի փաստաթղթից» : Միացյալ Պետքաղվարչության մասին առված է,

«Իր գործունեյությամբ Պետքաղվարչությունն անգամ՝ նախկին Զեկան, վորին ամենամեծության պարտականություններից մեկն եր վիճակվել՝ հականեղափոխության գիմ մզզող կովում և վորը փայլուն կերպով կատարեց այդ պարտականությունը, այժմ ընդհանուր բյուրոկրատացման պայմաններում, նմանապես ավելի ու ավելի և շեղվում պրոլետարական հեղափոխության պաշտպանության ուղղություն ուղուց : Նա իր գործունեյությամբ, վոխա-

նակ քաղաքական և տնտեսական հակահեղափոխության գեմ կուիլ մզելու, գնարով ավելի յե ուղղված բանվորների որբնական զժողոհության գեմ, մի զժուհություն, վորի զրկապատճառն են մանր բուրժուական բյուրոկրատիկ խեղաթյուրումները : Նա սպայքարի յե յենում նույնիսկ ներկուսակցական սպողիցիայի գեմ» :

Կարմիր բանակի մասին՝ Հետեյալ բանսարկութուքերն են ասված :

«Ասանձնապես վասնգավոր կացություն և սուզծվում Կարմիր բանակում : Զնայած կուսակցության ծրագիրը պահանջում ե, վոր պետք և «դասակարգային միաձուլություն» և «հնարավոր չափով սերտ կապ հաստատվի զորամասերի ու զործարանների, պրոֆմիությունների, գյուղի չքալորական կազմակերպությունների միջև», վոր հրամկագմը, սկզբում գոնե սոսրինը, անհրաժեշտ և կազմել գիտակից բանվորների ու գյուղացիների չարքերից» — այնուամենայնիվ այդ հրամանատարական կազմը բաղկացած է նախկին սպաններից և գյուղացիության կուլակային տարրերից : Գնալով ավելի յեն վերացվում վո՞չ աշխատավորական ասթրերի մասնակցության վերաբերյալ սահմանափակումները : Յերկրային զորամասերում, մանավանդ հեծելազորի չարքերում, զերակըում և ունեոր զյուղացիությունը, սոսրին հրամկագմի մեջ՝ գլխավորապես կուլականըը :

Իսկ ինչ վերաբերում է կուսակցական կարմիր հրամանատարներին, չի կարող նրանց վրա չան-

գրադառնալ կուսակցության բյուրոկրատացումը, և նրա ու բանվորների միջև հաստատված կապի թուլացումը։ Պրոլետարիատի ազգեցությունը կարմիր բանակում թուլանում է։ Այդ պայմաններում կարմիր բանակն սպառնում է մի հարմար գեղք դառնալ բոնապարտյան ավանդության համար»։

Բյուրոկրատիզմի մասին հետեւյալ ձեռվ և խոսվում։

«ԿԿ-ի սխալ քաղաքականության վերջին յիշեց ամրվա ընթացքում տպարատի բացասական կողմերը մեծ չափով ստեղծացել են։ մանր բուրժուազիայի ազգեցությունը մեծացել է։ կուլակը քաղաքական իրավունքներ և սուացել (խորհուրդներում)։ «Բյուրոկրատիկ ինեղաթյուրումներն» այժմ այնքան հեռու յեն գնացել, վոր նրանց մեջ արդեն ակներեն կերպով մանր-բուրժուական վերասերժան տարրեր են զգացվում»։

Պետության մասին հետեւյալ դասովությունն և արգում («պիտուն» մարքսիստների կերպարանքով)։

«Այդ քաղաքականության (այսինքն՝ կուսակցության քաղաքականության. Ա. Ռ.) չարունակումը վտանգ և սպառնում, վոր պրոլետարական դիկտուրայի իշխանությունը, — ավելի ու ավելի կտրվելով իրեն ծնունդ տվող դասակարգից և միենույն ժամանակ լիովին չարտահայտելով վորեւ այլ դասակարգի շահերը, — գերդասակարգային մի իշխանության կվերածվի, մի իշխանություն, վոր յերկրվում և դասակարգերի միջև՝ նայած թե վոր դասակարգն ավելի ուժընորեն և

հուպ առաջ ավյալ մոժենուում։ Այդ քաղաքականությունն սպառնում է պրոլետարական իշխանությունն այնպիսի մի իշխանություն դարձնել, վորը, ըստ Ենգելսի «ժամանակավորապես վորու անկախությունն է ձեռք բերում յերկու դասակարգի նկատմամբ, վորպես դրանց կարծեցյալ մի միջնորդ»։

Ահավասիկ մեր տնակսական և ընդհանուր քաղաքականության վերաբերյալ մի քանի ցիտատ ես։ Առաջինը հետեւյալն է.

«... 1925 թ. Հոկտեմբերից աշխատավարձի անումը կանգ առավ և նույնիսկ իջնելու ձգտում է ցույց տալիս։ մինչդեռ այդ ժամանակաշրջանում բանվորի արտադրանքը բարձրացել և առնվազը 15 տոկոսով։ Միենույն ժամանակ, խիստ ուժեղացել է բանվորի վրա գործադրված վարչական մնչումը, աղմինիստրացիայի իրավունքներն զգալի չտիրով ընդարձակվել են։ Դրա հետեւանքն այն է, վոր գնալով մեծանում է բանվոր դասակարգի գըժ-գոհությունը»։

Յերկրորդ ցիտատը.

«Յեթե վերջին տարիներում կապիալիստական տարրերը՝ սոցիալխոտականի համեմատությամբ ավելի արագ են աճում, դրա պատճառը վո՛չ թե սոցիալիզմի կառուցման ոբյեկտիվ անկարելիությունն է, այլ ԿԿ-ի այն քաղաքականությունը, վորով շարունակ զիջումներ և արվում մանր բուրժուազիայի ճնշումին»։

Յեկ վեցխառես վերջին ցիտատը.

«Եթե կուռօպակցական և գրա հետ միաբնի բան-

վորական դեմոկրատիայի վոչնչացումը, վոր տեղի ունեցավ 1923 թվականին, լոկ մի պատրվակ հանդիսացավ՝ գյուղացիական-կուլտակային՝ դեմոկրատիային զարկ տալու։ Կկ-ի քաղաքականությունը վոչնչացումը է պրոլետարիատի ակտիվությունը, այլև զարգացնումը և վոչնչ պրոլետարական դասակարգերի ակտիվությունը։

Յես մտադիր չեմ այս ժողովում քննալատել ցի-
տատների այս ամբողջ փունջը, վարից հակակուսակ-
ցական և հակախորհրդային հոռ և փոքում:

Այդ անհեթեթությունների մեջ (Պետքաղվարչության, Կարմիր բանակի, «գերլազասակարգային» (?!) պետության, «կուլակային գեմոկրատիային» մասին) նույնամբ ջմարտություն և պարունակվում, վորչափ և հին, ծեծված և բանվոր գասակարգին ու պրոլետարիատի գիկատառը բարյին թշնամի այն հերուստանքների մեջ, վորոնցով լի յեն մենչեկական գրչակների «գիտական» (նույնպես Ենգելսի ցիտատներով համեմած) ու վո՞չ գիտական բարբաջանքները՝ թե՛ գեմոկրատիայի սքանչելիքների և թե՛ խորհրդային իշխանության չուտափույթ տապալման անհրաժեշտության մասին:

Յես այս ցիտատները մեջ բերեցի միայն նրա համար, վոր ցույց տամ իսկական դեմքն ողողվեցի այն «Ճախ» թեկի, վորից ոպոզիցիայի դեկափարները չուղեցին տարորութել չնայած ԿԿ-ի և ԿՎՀ-ի անդումներից շատերի համառ պահանջներին:

ԵՆԿ. ՏՐՈՅԿՈՒ ՆՈՐԱԳՈՒՅՑՆ ՀԱՅՏՆՈՒԹՅՈՒՆԵՐԸ
Այժմ, թույլ տիեզ ձեր ուշադրությունը հրախ-

լիմ մեր սպովիցիայի «կենտրոնական անձնավորության»՝ ընկ: Տրոցկու քաղաքական այն իդեոլոգիայի վրա, վորը պարզություն կերպով յերեան յեկավ Յարությավի կայարանում կատարված ցույցից հետո մի ցույց, վոր սարքված եր Սմիլգային «բարեկամաբար» ջանապարհ գցելու համար և վորին մասնակցում եր և նեղմանական բռնժուազիան, և քաղքինին, և զուարան պատահական անձնավորություններ:

Ապողիքիայի սովորական մեղադրանքներից լուրջ
տալու համար, յես կը կին անդամ ստիպված էն քող-
վածքներ անել սոլոդիցիայի ճառերից. և Հայուար-
բությաններից:

«Ֆրանսիական Մեծ Հեղափոխության ժամանակակից մարդ և ընկել գելքոտինի տակ : Մենք իս բավականաչափ մարդ գնդակահարեցինք : Ասկայն Ֆրանսիական Մեծ Հեղափոխությունը յերկու հիմնական գլուխ (շրջան, ԽՄԲ.) և ունենել՝ մեկն ընթանում եր այսպիս (գեղի վեր և ցույց տալիս), իսկ մյոււս՝ այսպիս (գեղի ցած) : Այս բանն, ահա, պետք է հասկանալ : Եերբ հեղափոխությունը գեղի վեր եր զնում, Ֆրանսիական յակոբիանկանները՝ այն ժամանակվա բայց իկ-ները գիւղութինի եյին յննիքարկում սպիտակ գըշարդիսկաններին ու Ժիրոնդիսաններին : Մենք ևս անեցել ենք այսպիսի մի գլուխ (շրջան, ԽՄԲ.) յերբ մինք, ոպողիցիններներս գնդակահարուց ներ եյինք : Ապա Ֆրանսիայում մի այլ գլու-

(արջան. ԽՄԲ.) սկսվեց, յերբ Փրանսիական աջ յակոբինների ուստորյալովականները և կիսաուստորյալովական տերմիդորիանականներն սկսեցին գնդակահարել ձախ յակոբինականներին՝ այն ժամանակվա բայլշեկիններին։

Յես կցանկանայի, վոր ընկ. Սոյլցն^{**}) իր անալոգիայի վրա խորհեր մինչև նրա արածաբառական վախճանը և ամենից առաջ ինքն իրեն պատասխաներ, թե ըստ վո՞ր գլխի (որինադրքի պլուխը. ԽՄԲ.) ուզում ե նա մեզ գնդակահարելք։ . . . «Յերբ մենք գնդակահարում ենինք, մենք հասաստ գիտեյինք, թե վո՞ր գլխի հիման վրա եյինք գնդակահարում, իսկ այժմ ձեզ համար, ընկ. Սոյլց, սլա՞րզ ե, թե վո՞ր գլխի հիման վրա մըտադիր եք մեզ գնդակահարելու (առայժմ կազմակերպչական յեղբակացությունների կարգով)։

«Յես յերկյուղ եմ կրում, ընկ. Սոյլց, վոր պուք մտադիր եք մեզ գնդակահարելու կիսաուստորյալովական, այսինքն՝ տերմիդորիանական գրլի հիման վրա։»

«Իսկ «Պրավդա»-յում զետեղված «Ոպոզիցիայի ուղին» հոդվածը նույն առնով չի համակված միթե։ Ով անդյակ և «Պրավդա»-ի այդ վերջին առաջնորդողին, նա պետք ե, վոր զա գրա հօտը։ Այդ հոդվածից փչում ե «Յերկրորդ գլխի» կը արուկ հօտը։ «Յերկրորդ գլխից» փչած հօտը կի-

^{**}) Ընկ. Տրոցկին ներկա դեպքում նկատի ուներ ընկ. Սոյլցի մի խոռակցությունն ոպոզիցիոններից ժեկի հետ։

սառւստրյալովականություն ե, վորը դուրս է ցայտում արդեն մեր կուսակցության պաշտոնական հիմնարկությունից («Պրավդա»)և վորը զինաթափի և անում պրոլետարիատի հեղափոխական ավանդարդը, միննույն ժամանակ կուսակցական ուժիմը խեղդում ե բոլոր նրանց, վորոնք ընկ. ընկ. Զինովյելի և Տրոցկու որինակին հետեւով, քննադրատում են այդ գիծը։»

Տերմիդորի հարցն այնպիսի մի անսպոզ պարզությամբ և գրել ընկ. Տրոցկին, վոր մեկնարանությունների կարիք չկա։—

Մի ցիտատ ես մեջ բերենք ընկ. Տրոցկու նույն ձառից։

«Վերջին ամբողջ չըջանի եյությունն այն ե, վոր պրոլետարիատը քաղաքականապես կծկում է, իսկ մնացյալ դասակարգերի գործունեյությունը ծավալվում է ով չի ըմբռոնում այդ, իմ կարծիքով, նրան պետք ե խկույն և յեթ դուրս հանել զեկագարող հիմնարկություններից։ Յեվ այդ կծկումն ու ծավալումը յերևան ե գալիս ամենուրեք . . . «Ճիշտ այնպես, ինչպես նյութական ասպարիզում ընդարձակվում են վո՞չ պրոլետարական դասակարգերը, — այդ բանը տեսնում ենք ամեն տեղ՝ թե՛ փողոցում, թե՛ խանութներում, թե՛ ելեքտրագարշի վագոնում և թե՛ բնակարաններում, — ուսւյնպես և քաղաքականության մեջ այժմ պրոլետարիատն ամբողջովին կծկում-սեղմափում ե, իսկ մեր կուսակցական ուժիմն ավելի յեւ ուժեղացնում պրոլետարիատի դասակարգային կծկումը»։

Բավական թվով նման պնդումներ կարելի յե գըտ-
նել նաև ուրիշ ընկերների մոտ :

Աչալասիկ ինձ մոտ կան ընկ . Զինովյեվի ճա-
ռերից և Հոդվածներից քաղված մի շարք ցիտատներ :
Դրանք բոլորն ել վկայում են մի բան՝ ոպողիցիան,
պառակտումի իր քաղաքականությունն աշխատում և
արդարացնել նրանով, վոր մենք, իրրե թե, ապրում
ենք հեղափոխության «Յերկրորդ զՈՒԽԸ», Տերմիդորի
շրջանը, այսինքն՝ պրոլետարիատի դիկտատորայի
լուծարքի և բուրժուական իշխանության կազմակերպ-
ման շրջանը : Միայն այս տեսակետից, հարկավ կա-
րելի յէ հասկանալ նաև Կլեմանսոյի վերաբերյալ ընկ .
Տրոցկու հոչակավոր «թեղը», վորը նա հետեւյալ ձեռվ
ե դնում .

«Իմպերիալիստական պատերազմի սկզբին,
Փրանսիական բուրժուալիային դլամբրել եր
անդեկ-անառադաստ մի կառավարություն : Այդ
ժամանակներում Կլեմանսոյի խմբակն ոպողիցիոն
դիրք եր բոնել կառավարության հանդեպ : Զնա-
յած պատերազմին և ռազմական դրաֆնության,
չնայած նույնիսկ նրան, վոր գերմանացիք Պարի-
զից 80 կիլոմետր հեռավորության վրա եյին կան-
գնած (Կլեմանսոն ասում եր, «Հենց այդ պատ-
ճառով իսկ»), նա կատաղի պայքար եր մղում
մանր-բուրժուական թուլամորթության և ան-
վճռականության դեմ՝ իմպերիալիստական վայ-
րագության ու դաժանության ի պաշտպանու-
թյուն : Կլեմանսոն դրանով չեր դափնանում իր
դասակարգին՝ բուրժուալիային, այլ ընդհակա-
ռակն, ավելի հավատարմարար, ավելի հաստա-

տապես ու վճռականորեն և ավելի խելացի կեր-
պով եր պաշտպանում նրան, քան Վիվիանին,
Պենլեյին և ընկ .: Անցքերի հետադար ընթացքը
հաստատեց այդ հանգամանքը, Կլեմանսոյի խըմ-
բակն իշխանության դլուխ անցավ և ավելի հե-
տևողական, ավելի ավաղակային իմպերիալիստա-
կան քաղաքականությամբ ապահովեց Փրանսիա-
կան բուրժուալիայի հաղթանակը : Կա՞յին ար-
դյոք Փրանսիական այնպիսի լրագրողներ, վորոնք
Կլեմանսոյի խմբակը պարտվողական անվանելին :
Հավանական ե, կային : Բոլոր դասակարգերի գու-
մակում ել քարչ են դալիս տխմարներ և լան-
սարկուներ : Սակայն նրանք միշտ ել հնարալորու-
թյուն չունեն հավասարապես նշանակալից դեր
խաղալու »:

Վերջին նախադասության իմաստը, ըստ յերեվույ-
թին, այն պետք ե լինի, վոր «բանսարկուներն» ու
«տխմարները» մեզանում ավելի նշանակալից դեր են
կատարում : Տրոցկու այդ «թեղից» և ծնունդ առնում
ոպողիցիոն այն պլատֆորմը, վոր վերաբերում և մեր
յերկրի պաշտպանության այժմեյական հարցին : Մեր
պաշտպանունակությունը կախված ե վո՛չ միայն բա-
նակի կորովից, այլև մեր վողջ յերկրի կացությունից,
վորտեղ բանվոր դասակարգն ու բայլշեվիկյան կուսակ-
ցությունը վճռական դեր են կատարում :

Պատերազմի վտանգի առթիվ, ոպողիցիան բաց ե
թողնում Կլեմանսոյի վերաբերյալ իր թեղը, վորպես
մեր պետության պաշտպանունակությունն ապահովե-
լու մի մեթոդ, կուսակցական դեկալարությունը փո-
խելու պահանջ ե առաջադրվում : Այդպիսով պետք ե ,

վոր հասկանալի գառնա դըրույթը այն բոլոր հարցերի, վորոնցով պապղում են պատերազմի վերաբերյալ նրանց բոլոր հոգվածներն ու ճառերը, այն ե՛ թե ի՞նչ նպատակներ ունի պատերազմը, ո՞ւմ շահերի համար պիտի մղվի նա, ի՞նչպես են վերաբերվում դեպի պատերազմը չքափոր տարբերը և այլն, և այլն: Մենք դործ ունենք այստեղ «պարմանական պաշտպանողականության» տեսակեաի հետ, մենք տեսնում ենք ուղղակի մի հարձակում մեր կուսակցության վրա՝ մինչև իսկ բացարձակ փողոցային մի յելույթով:

Պատերազմի վտանգը մյուս կուսակցությունների յելույթի համար ոգտագործելու տեսակեալ յերեվան և գալիս, որինակ, նաև ընկ. Զինովյեվի հետեվյալ խոսքերի մեջ.

«Դեպի «ոպոզիցիան» ցույց արված վերաբերմունքը մի փորձաքար և ներկայումս: Այդ հարցով զբաղված ե այժմ բուրժուական ամբողջ «խոշոր» մամուլը (տես, որինակ, Լոյյդ Զորջի նոր հոգվածը): Թե մենք (ոպոզիցիան) «կազմալուծում ենք թիկունքը» և «դժվարությունները սպեկուլացիայի առարկա յենք դարձնում»—, այդ բանին վո՞չ Զեմբերլենն ե համառում, վո՞չ ել Մակոնայլուը: Իսկ վոր ոպոզիցիային հասցված նոր հարվածները քույլացնում են մեր կուսակցությունը՝ այդ նրանք գետեն: Յեվ դրանից նրանք իրենց յեզրակացությունները կանելին՝ կշտապեյին հարձակում դուծելու»:

Հստ Զինովյեվի, դուրս ե գալիս, վոր յեթե մենք, ձեզ հետ միասին, ավելի վճռական պայքար մղենք կուսակցության մեջ դժնված պառակտիչների դեմ, կու-

սակցության հասցեյին կատարվող զրպարտության և սպոզիցիայի կատարելազես չտեսնված այդ բոլոր բաների դեմ, գրանով մենք, իբրեւ թե կարագացնենք բուրժուական պետությունների կողմից մեզ վրա նյութվող հարձակումը: Ապա նույն փաստաթղթի մեջ ամփած է.

«Այդպիսով, պատերազմի ժամկետները զգալի չափով ենթակա մեզանից են կախված, մեր միաձայնը բարյութից, միասնականությունից,՝ մեր ամրակուու լինելուց ու մեր շրջահայացությունից»:

Յեվ այդ ասում ե նա իր այն առաջարկությունից հետո, թե պատերազմի «հավանականություն» տերմինը պետք ե փոխել «անխուսափելիություն» տերմինով:

Կեմանսոյի վերաբերյալ թեզը, Տերմիգորի թեզի հետ միասին, լիակատար չիմք տվեց պլենումի բանաձեկում մատնանշելու, թե ոպոզիցիայի «պաշտպանողականությունը պայմանական ե»: Այդ «պարմանական պաշտպանողության» իմաստն այն ե, թե քանի վոր կուսակցության ներկա կեցը, պրոլետարիատին ու յերկրին պատերազմական հարձակումների դեմ պաշտպանություն չի յերաշխավորում, ապա ուրեմն, այդ պաշտպանությունն ապահովելու նպատակով, այդ պաշտպանության վրապես նախապայման, անհրաժեշտ և համարվում փոխել կեցի կուսակցական քաղաքականությունը և թողնել վոր ոպոզիցիան իշխանության գլուխն անցնի (կեմանսոյի որինակով): Պատահաբար շեր, վոր ընկ. Տրոցկին պլենումում հետևյալը թոցրեց բերանից: «Տերմիգորիանականներին դուրս կանենք, իսկ հայրենիքը կպաշտպանենք»:

իզեական տարածայնությունների սրումն ե, հար-

կավ, վոր վորոշում և նաև կազմակերպչական համապատասխան գործողությունները։ Իսկ ոպողիցիայի այդ կազմակերպչական գործողությունների սուր բը-նույթն ել, իր հերթին, ոպողիցիային ստիպեց ծայր աստիճան սրել իր իդեական տարածայնությունները կուսակցության նկատմամբ, սկզբունքային հիմնավորում տալով հասնել այնպիսի գրությունների, ինչպես որինակ Կլեմանսոյի վերաբերյալ «թեզն» և։ Ապողիցիայի քաղաքական իդեոլոգիայում այդ վերջին կետը ամենավտանգավորն է, վորովհետեւ նա ձգտում է զինաթափ անել մեր կուսակցությունը, զինաթափ և անում պրոլետարիատին և, ըստ երտթյան, ոպողիցիայի բոլոր հետեւորդներին պրոլետարական պետության «պայմանական պաշտպանողականներ» դարձնում, առաջադրելով՝ վորպես նրանց հաղթության հիմնական սպայման, պայքար մղել մեր կուսակցության 99,9 տոկոսի դեմ։ Մինչև այժմ, Հո, կուսակցական և վո՛չ մի կազմակերպություն, վո՛չ մի բջեջ չեա, վորը պատպանելու լիներ ոպողիցիային։

ՄԵՐ ՈՊՈՋԻՑԻՈՆԵՐԻ ՀԵՏԵՎՈՂԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Եթե տերմիորի և Կլեմանսոյի վերաբերյալ հարցը այսպես ե գրվում, վորը ոպողիցիան իր գլուխավոր զենքն և դարձրել կկ քաղաքական գիծը քննադատելու համար, այդ գեղքում մեր և ոպողիցիայի տարածայնությունների մնացած կետերը նվազ նշանակություն են ունենում (անդլո-ուսական կոմիտեյի, չինական հեղափոխության հարցը և այլն)։ Իհարկե, ոպողիցիան պլենումում նորից փորձեց «գնդակոծել» կկ-ին անդլո-ուսական կոմիտեյի և չինական հեղափոխության

հարցերի առթիվ։ Վորպեսզի ցույց տամ, թե վորքան հետեւողական և ոպողիցիան և մասնավորապես ընկ։ Զինովյելը անդլո-ուսական կոմիտեյի հարցում, յես կհշեցնեմ, թե իր ժամանակին ինչ նշանակություն եր առլիս ինքը, ընկ։ Զինովյելն այդ հարցին։ Ահա թե ինչ եր առում նա կուսակցության 14-րդ համագումարում։

